«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ԱՐՄԱՎԻՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԱԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան - 2025

ՆԱԽԱԲԱՆ

«Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԱՊՏՔ, ՄՈՒՀ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Գնահատումը կատարվել է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից: Հավատարմագրման գործընթացն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսավորմամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 7
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 12
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 12
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 12
ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 15
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 15
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 18
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 24
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 30
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 34
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 38
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 40
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 45
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 46
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 49
ՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 54
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 55
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 55
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 57
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 59
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 62
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 63
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 64

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ

ՄՈՒՀ-ի գործունեությունը և պատմությունը.

Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջը հիմնադրվել է 1928թ-ին, որպես Հոկտեմբերյանի բամբակագործական տեխնիկում: 1933թ-ին տեխնիկումի իրավահաջորդն է հանդիսացել Հոկտեմբերյանի «Լուկաշինի» անվան գյուղատնտեսական սովխոզ-տեխնիկումը: Վերջինիս համար «Լուկաշինի» անվան սովխոզը հանդիսացել է պրակտիկ բազա: Տարածաշրջանը միշտ գյուղատնտեսական կարևոր նշանակություն է ունեցել՝ մասնագիտացված բուսաբուծության ուղղությամբ, հետևաբար տեխնիկումի դերը նշանակալի էր իր՝ գյուղատնտեսության ոլորտի տարբեր մասնագետների պատրաստման(ագրոնոմներ, գյուղատնտեսներ, հաշվապահներ, տնտեսագետներ, գինեգործներ) առումով:

Կրթության ոլորտում, ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում տեղի ունեցող բարոփոխումները հանգեցրեցին նրան, որ Հոկտեմբերյանի «Լուկաշինի» անվան սովխոզ-տեխնիկումը վերապրոֆիլավորվեց Արմավիրի «Գյուղատնտեսական քոլեջ»-ի: Քոլեջում կրթվող և մասնագիտական որակավորումներ ստացող մասնագետները տարածաշրջանի և նրանից դուրս աշխատաշուկայի պահանջարկն են լրացրել և լրացնում են: Քոլեջի հերթական իրավահաջորդը՝ ժամանակի հրամայականից կախված, դարձավ «Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ»-ը: Անվանումը չփոխեց քոլեջի հիմնական ուղղվածությունը, և գյուղատնտեսական ոլորտի մասնագետների պատրաստմանը ավելացան աշխատաշուկայում պահանջարկ վայելող շատ այլ մասնագիտություններ:

Այսօր Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջը հանդիսանում է «Արմավիրի պետական բժշկական» և «Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական» քոլեջների իրավահաջորդը: Եվ այսօր Քոլեջը մասնագետներ է պատրաստում շուրջ 25 մասնագիտությունների գծով:

Քոլեջում պարբերաբար կազմակերպվել և անցկացվել են տարածաշրջանի գյուղատնտեսության ոլորտի մասնագետների վերապատրաստումներ՝ ժամանակակից գյուղատնտեսության ուղղությունները տարածաշրջանում զարգացնելու նպատակով:

Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջը Ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնում է առաջին անգամ:

ՄՈՒՀ-ի զարգացման ուղղությունները և կրթական ծրագրերը

Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջը Հայաստանի Արմավիրի մարզում գործող կրթական հաստատություն է, որն առաջարկում է տարբեր կրթական ծրագրեր՝ մասնագիտական հմտությունների ու գիտելիքների զարգացման համար: Քոլեջը նպատակ ունի ուսանողներին ապահովել մասնագիտական և տեխնիկական կրթությամբ, ինչի միջոցով նրանք կարող են ձեռք բերել աշխատանքի համար անհրաժեշտ հմտություններ՝ ինչպես տեղական, այնպես էլ միջազգային շուկայում:

Արմավիրի քոլեջում սովորում են հիմնականում միջին մասնագիտական կրթություն ունեցող ուսանողներ, ովքեր կարող են ընտրել մասնագիտությունների լայն շրջանակ՝ այդ թվում տնտեսագիտություն, ինֆորմացիոն տեխնոլոգիաներ, գյուղատնտեսություն և այլ բնագավառներ:

Քոլեջն ունի կարևոր դեր մարզի տնտեսական ու սոցիալական զարգացման գործում՝ համապատասխանեցնելով իր կրթական ծրագրերը մարզի ռազմավարական ծրագրի գերակա ուղղություններին:

Արմավիրի մարզի զարգացման գերակա ուղղություններն են՝

Արմավիրի մարզի զարգացման ռազմավարական ծրագրում առանձնացվում են մի շարք առաջնահերթություններ, որոնք ներառում են.

- **Գյուղատնտեսության զարգացում** – Մարզին բնորոշ է գյուղատնտեսական հարուստ ավանդույթներ, և այսօր էլ գյուղատնտեսությունը հանդիսանում է տարածաշրջանի հիմնական զբաղմունքը: Գերակա են համարվում գյուղատնտեսական արտադրության, վերամշակման և շուկայի զարգացումը:
- **Արդյունաբերական ոլորտի զարգացում** - Տնտեսության բազմակողմանիացման նպատակով խթանվում են գյուղմթերքի վերամշակման, թեթև և սննդի արդյունաբերության ոլորտները:
- **Տուրիզմի զարգացում** - Մարզը ունի մշակութային և պատմական բազմազան հուշարձաններ, ինչը նպաստում է տուրիզմի զարգացման ներուժի մեծացմանը:
- **Տեխնոլոգիական և տեղեկատվական ծառայությունների զարգացում** - Թվային հմտությունների խթանումն ու ՏՏ մասնագիտությունների զարգացումը ռազմավարական կարևորություն ունեն, հատկապես՝ երիտասարդների շրջանում աշխատանքի հնարավորություններ ապահովելու նպատակով:

Պահանջված մասնագիտությունները մարզում

Հիմք ընդունելով մարզի ռազմավարական ուղղությունները՝ Արմավիրում պահանջված են հետևյալ մասնագիտությունները.

1. Ագրոնոմիա, գյուղատնտեսություն և գյուղմթերքի վերամշակում
2. Սննդի տեխնոլոգիաներ և արտադրություն
3. Տուրիզմի կառավարում Տեղեկատվական տեխնոլոգիաներ
4. Արտադրական ու տեխնիկական մասնագիտություններ

Քոլեջի կրթական ծրագրերի ուղղությունները

Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջը առաջարկում է ծրագրեր, որոնք միտված են վերոնշյալ ոլորտներում որակյալ մասնագետների պատրաստմանը: Դրանք ներառում են՝

1. Գյուղատնտեսական կրթական ծրագրեր՝ ագրոնոմիա, գյուղատնտեսական տեխնիկայի կառավարում, մթերքի պահպանություն և վերամշակում:
2. Սննդի տեխնոլոգիաներ՝ սննդամթերքի արտադրության կազմակերպում, արտադրական գործընթացների կառավարում:
3. Տուրիզմ և հյուրընկալություն՝ տուրիզմի կազմակերպում, հյուրընկալության ծառայություններ:
4. SS և տեխնոլոգիաներ՝ ծրագրավորում, համակարգչային ցանցերի կառավարում և SS սպասարկում:

Այս ծրագրերն ուղղված են մարզի տնտեսական աճին նպաստող մասնագետների պատրաստմանը, ինչը կարևոր է ինչպես մարզի, այնպես էլ ողջ հանրապետության զարգացման համար:

Ներկայումս քոլեջի առկա և հեռակա բաժիններում սովորում է 1400 ուսանող: 2023-2024 ուսումնական տարում քոլեջը տվել է 148 շրջանավարտ: Նրանցից 11-ը (7,4%) շարունակել են կրթությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում, 27-ը (18.24%) աշխատում են իրենց մասնագիտությամբ, իսկ 9-ը(6.08)՝ ոչ մասնագիտությամբ:

Դասախոսական կազմը բաղկացած է 117 դասախոսից, որոնցից 21- ը աշխատում են համատեղության կարգով, 5-ը հանդիսնաում են շրջանավարտ-դասախոսներ:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԱՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խմբի կողմից: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջը միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է՝ իր սահմանված առաքելությամբ:

Փորձագիտական խումբը հաշվի է առել ԱՏՊՔ-ն, որպես միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, կարևոր նշանակություն ունի տարածաշրջանի և ՀՀ-ի համար, այն, որ հաստատությունը շուրջ մեկ տարի է, ինչ վերաձևավորման գործընթաց է անցել, գտնվում է անցումային փուլում, ինչպես նաև, որ քոլեջն առաջին անգամ է ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնում:

Փորձագիտական խումբը նշում է, որ ԱՏՊՔ-ն յուրօրինակ առաքելությունունի տարածաշրջանի համար՝ որպես միջին մասնագիտական բազմաոլորտ կրթական ծրագրեր իրականացնող հաստատություն և այս գիտակցումն առկա է քոլեջում: Քոլեջը փորձել է ռազմավարական ծրագիր կազմել, սակայն կազմված նպատակներն ու հիմնախնդիրները վերլուծությունների հենքով և շահակիցների բավարար ներգրավմամբ չի իրականացվել և չի վերածվելիստակ գործողությունների պլանի:

Քոլեջը ունի տվյալների հավաքագրման որոշ մեխանիզմներ, սակայն գործընթացը դեռևս կանոնակարգված չէ և հիմք չի հանդիսանում տվյալահենք որոշումների կայացման համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ այդպիսի մեխանիզմները պետք է մշակվեն՝ համապատասխանեցնելով քոլեջի առանձնահատկություններից բխող հետազոտական նպատակներին: Փորձագիտական խումբը գտնում է, որ դեռևս առկա չեն բացահայտված այնպիսի խնդիրներ և իրականացված չեն համակողմանի վերլուծություններ, որոնք կառավարչական որոշումների հիմքում ընկնեին: Փորձագիտական խումբը համարում է, որ քոլեջում դեռևս կառավարման և որակի ապահովման համակարգեր ձևավորելու խնդիր է առկա:

Քոլեջում առկա են ՊԿՉ-ներին համապատասխան բազմաոլորտ կրթական ծրագրեր: Սակայն կրթական ծրագրերը բավականին անհաղորդ են անհրաժեշտ փոփոխություններին, այս տեսանկյունից քոլեջը լուրջ անելիքներ ունի: Ուսանողներին տրվող հանձնարարականները և իրականացվող գնահատումները գլխավորապես ուղղված են տեսական բնույթի գիտելքի ձևավորմանն ու ստուգմանը: ՄՈՒՀ-ը ներգրավել է պրակտիկ ոլորտից որոշ դասախոսների և ունի բավականին բազմաոլորտ մասնագիտական կազմ, ինրը

դրական է, սակայն առկա են խնդիրներ նեղ մասնագիտական ուղղություններով դասավանդողների: Մուհը նաև խնդիրներ ունի ռեսուրսային բազայի ուղղությամբ՝ թե՛ տարրական կրթական միջավայր ձևավորելու հետ կապված, և՛ թե մասնագիտական անհրաժեշտ գիտելիքներ ու կարողություններ ձևավորելուն միտված լաբորատոր պայմանների ու կրթական ժամանակակից մեթոդների կիրառման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների տեսանկյունից: Թերևս, քոլեջում առկա են որոշ լաբորատորիաներ, դիդակտիկ նյութեր, տեխնիկական միջոցներ: Քոլեջը նաև համագործակցում է գործատուների հետ և որոշակիորեն կիրառում նրանց ռեսուրսային բազան, այս տեսանյունից առկա է նաև հաջող փորձի օրինակներ: Սակայն, ընդհանուր առմամբ, այս ամենը մի կողմից լիարժեք արդյունավետությամբ չի կիրառվում, մյուս կողմից էլ ռեսուրսային բազան արդիականացման և գործատուների հետ համագործակցությունն էլ ընդլայնման ու զարգացման անհրաժեշտություն ունեն:

Չնայած՝ քոլեջն ունի ՊԿՉ-ներին համապատասխան կրթական ծրագրեր, որոշ ռեսուրսային բազա և ներգրավում է համապատասխան որակավորումներով դասավանդողներ, այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջում առկա են խնդիրներ որակավորումների արժանահավատ շնորհման հետ կապված:

Քոլեջը մի շարք մեխանիզմներ ունի դիմորդների ներգրավման համար և որոշակիորեն նաև դրանց արդյունքում է կարողացել ապահովել ուսանողների քանակի աճ:

Քոլեջն ունի որոշ մեխանիզմներ ուսանողների կրթական կարիքների վերհանման ուղղությամբ, սակայն բացի այդ նաև այդպիսի մեխանիզմներ մշակելու գործընթաց է ձեռնարկում: Թերևս, դեռ այդ կարիքները լիարժեք ուսումնասիրված չեն, և առկա չեն համընդհանուր վերլուծություններ ու բացահայտված խնդիրներ, որոնք բարեփոխումների հիմք դառնային:

Քոլեջը որոշակիորեն ծանոթացնում է ուսանողներին կարիերայի հնարավորություններին, կազմակերպում է տարբեր միջոցառումներ: Քոլեջը նաև հավաքագրում է որոշ տվյալներ շրջանավարտների վերաբերյալ, սակայն այդ տվյալները գլխավորապես ըստ պահանջի հաշվետվություններ ներկայացնելու նպատակ ունի: Այդ տվյալները հետագա ուսումնասիրման և վերլուծության չի ենթարկվում քոլեջում, նաև քոլեջը դեռևս չի գործածում շրջանավարտների գործունեության հետագծին հետևելու համակարգային մեխանիզմներ:

Քոլեջը չունի հետազոտության ուղղությամբ նպատակներ և ռազմավարություն, ինչպես նաև գործող խրախուսման մեխանիզմներ: Դասախոսական կազմը հիմնականում հետազոտական (այդ թվում՝ տեղի և միջազգային փորձի ուսումնասիրություն) գործունեություն չի իրականացնում, բացառությամբ առանձին դեպքերի, որոնք դասախոսի անձնական նախաձեռնության արդյունք են: Ուսանողների վերլուծական և հետազոտական կարողությունների զարգացմանն ուղղված առաջադրանքներ հիմնականում առկա չեն, բացառությամբ առանձին որոշ լավ օրինակների:

Քոլեջում առկա են որոշ հաշվետվողականության գործընթացներ, սակայն այս ամենը հստակ կանոնակարգման, աստիճանակարգման և վերլուծական բաղադրիչի ներդրման

կարիք ունի: Քոլեջը քայլեր է ձեռնարկում պաշտոնական կայքի ձևավորման ուղղությամբ և հրապարակումներ է իրականացնում սոցիալական ցանցերի միջոցով, սակայն թափանցիկության ապահովման ուղղությամբ դեռևս լուրջ աշխատանքներ ծավալելու կարիք կա:

Քոլեջը արտաքին կապերի ուղղությամբ հիմնականում վարում է արդեն եղած համագործակցությունները պահելու քաղաքականություն, դրանք ընդլայնելու արտահայտված արդյունքներ առկա չեն: Փորձագիտական խումբը գտնում է, որ եղած համագործակցությունը դեռևս բավարար չէ քոլեջի կրթական և այլ կարիքների տեսնկյունից: Կարևոր է, որ քոլեջը կարողացել է ներգրավել գործատու դասավանդողներ:

Չնայած քոլեջը ռազմավարությամբ շեշտադրել էր միջազգայնացումը որպես նպատակ, սակայն փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջը դեռևս միջազգայնացման ուղղությամբ հստակ նպատակներ և հիմնախնդիրներ չի առանձնացրել: Այս ուղղությամբ նաև խրախուսման մեխանիզմներ առկա չեն: Քոլեջը դեռ նախադրյալներ չի ստեղծել միջազգային համագործակցության ուղղությամբ քայլեր իրականացնելու համար:

Ելնելով վերոնշյալից՝ փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ԱՏՊՔ-ն որոշ քայլեր է ձեռնարկում զարգացման ուղղությամբ՝ կարևորելով դիմորդների ներգրավման աշխատանքները, որոշ աշխատանքներ կատարեկով ուսանողների կարիքների վերհանման ուղղությամբ, դասավանդող գործատուներ ներգրավելով, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ առկա խնդիրները դեռևս լուրջ արգելք են քոլեջի առաջընթացի և զարգացման համար:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. բազմաոլորտ մասնագիտությունների առկայություն,
2. բազմամասնագիտական աշխատակազմի առկայությունը,
3. բժշկական մասնագիտություններով գործընկերների ռեսուրսների համատեղ օգտագործման լավ փորձը,
4. տարածաշրջանում առանձնակի դերն և նշանակությունը,
5. դիմորդների հավաքագրման մեխանիզմներն և ուսանողների թվի կայուն աճը:

Հաստատության թույլ կողմերն են.

1. դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների անկատարությունը,
2. ՄԿԾ-ի մշտադիտարկման, բարելավման մեխանիզմների ոչ բավարար համակարգային լինելը[1],
3. Մի շարք նեղ մասնագիտական ուղղություններով դասավանդողների պակասը,
4. ՊԴ կազմի առաջընթացի և կատարելագործման մեխանիզմների թերի լինելը,
5. առկա նյութատեխնիկական բազայի արդյունավետ օգտագործման խնդրի առկայությունը,
6. արդյունավետ կառավարման և որակի ապահովման համակարգի խիստ անկատարություն,

[1] Նախադասությունը վերաձևակերպվել է քոլեջի կողմից տրված դիտարկումների հիման վրա:

7. ռազմավարական կառավարման գործընթացի անկատարությունը,
8. ուսանողների կարիքների վեր հանման մեխանիզմների թերի լինելը,
9. շրջանավարտների՝ ըստ մասնագիտության զբաղվածության ցածր ցուցանիշը,
10. դասախոսների և ուսանողների հետազոտական, վերլուծական աշխատանքներում ներգրավվածության սակավությունը,
11. ըստ կրթական ծրագրերի անհրաժեշտությունների գործատուների հետ համագործակցության շրջանակի քիչ լինելը:
12. միջազգային ծրագրերի ուղղությամբ քաղաքականության և նախաձեռնողականության բացակայություն:

Խորհրդատվություններ

Տվյալահենք կառավարում

1. Հստակեցնել քոլեջի առաքելությունը, ռազմավարական նպատակները և ապահովել նորաստեղծ քոլեջի զարգացումը՝ հենված տարածաշրջանում դերի վրա և ներգրավելով ներքին և արտաքին շահակիցներին:
2. Մշակել և ներդնել ռազմավարական նպատակների իրականացման հստակ ծրագիր (ներառելով ԳԱՑ-երը, բյուջեի և պատասխանատվությունների բաշխումը)՝ միաժամանակ ապահովելով կարճաժամկետ, միջնաժամկետ արդյունքների մշտադիտարկման գործընթաց:
3. Ներդնել կառավարման և որակի ապահովման արդյունավետ համակարգ, բարելավել արդեն եղած որոշ գործընթացներ՝ ապահովելով առկա մարդկային ռեսուրսների արդյունավետ կիրառելիություն և բոլոր գործընթացներում առաջնորդվելով որակի կառավարմա հիմնական սկզբունքով (ՊԻԳԲ շրջափուլ):
4. 4.Քայլեր ձեռնարկել ապահելու ֆինանսական մուտքերի բազմազանություն՝ կիրառելով առկա հնարավորությունները:
5. 5.Իրականացնել քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն, քոլեջում իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատում՝ ուղղված հետազոտահենք արդյունավետ կառավարման ապահովմանը:
6. Մշակել և ներդնել ուսումնասիրությունների իրականացման համապատասխան մեխանիզմներ և գործիքակազմ, բարելավել տվյալների հավաքագրման մեխանիզմները:

Որակավորումների արժանահավատ շնորհում

7. Ներդնել ՄԿԾ մշտադիտարկման գործուն մեխանիզմներ՝ ապահովելով դրանց բովանդակության բարելավումը նաև հենված աշխատաշուկայի պահանջների և համեմատական վերլուծության իրականացման վրա:
8. Բարելավել դասավանդման և ուսումնառության մեթոդները՝ ներառելով նորարար և փոխգործուն մեթոդնոր՝ ուղղված ՄԿԾ-ում նախատեսված կարողությունների և հմտությունների ապահովմանը:

9. Վերանայել գնահատման մեխանիզմները և մեթոդները՝ ուղղված ուսումնառության արդյունքների ձևավորման աստիճանականության գնահատման ապահովմանը:
10. Ապահովել նեղ մասնագիտական ուղղություններով դասախոսական կազմ:
11. Ներդնել դասախոսական կազմի կատարելագործման և խրախուսման մեխանիզմներ՝ հենված կարիքների և խնդիրների գնահատման արդյունքների վրա:
12. Ապահովել ըստ ՄԿԾ անհրաժեշտությունների նյութատեխնիկական և շենքային բազա՝ ստեղծելով դրանց արդյունավետ կիրառելության երաշխիքներ:

Երկարաժամկետ զարգացում

13. Բազմազանեցնել ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմները՝ բարձրացնելով գործընթացի արդյունավետությունը:
14. Հստակեցնել ՈւԽ դերը և ապահովել ակտիվ գործունեություն՝ ուղղված ուսանողների ակտիվ գործունեության բարձրացմանը:
15. Բարելավել կարիերային նպաստող ծառայությունները՝ նպաստելով շրջանավարտների՝ ըստ մասնագիտությունների զբաղվածության ցուցանիշի լավարկմանը և շրջանավարտ-գործատու կապի ամրապնդմանը:
16. Ապահովել դասախոսական կազմի հետազոտական աշխատանքներում ներգրավածություն՝ ներդնելով խրախուսման մեխանիզմներ:
17. Ապահովել ՄԿԾ-ում հետազոտական, վերլուծական բաղադրիչ՝ ներդնելով տարբեր մեխանիզմներ (ռեֆերատներ, կուրսային, ինքնուրույն աշխատանքներ և համապատասխան այլ հանձնարարականներ):
18. Հստակեցնել հաշվետվողականության աստիճանակարգությունը և բարելավել դրանք՝ ներդնելով վերլուծական բաղադրիչ:
19. Մշակել և ներդնել հասարակության հետ կապի և քոլեջի գործունեության թափանցիկության ապահովմանը միտված գործուն, արդյունավետ մեխանիզմներ:
20. Ընդլայնել գործատուների հետ համագործակցության շրջանակն՝ ըստ կրթական ծրագրերի ուղղությունների, ինչպես նաև զարգացնել համագործակցության ուղղությունները՝ չսահմանափակվելով միայն պրակտիկաների կազմակերպման գործընթացներով:
21. Ուսումնասիրել և տեղայնացնել միջազգային և տեղական լավագույն փորձը:
22. Աշխատանքներ ծավալել միջազգային ծրագրերում ներգրավվելու ուղղությամբ՝ ուշադրություն դարձնելով օտար լեզվի անհրաժեշտ իմացության ապահովմանը:

Փորձագիտական խմբի ղեկավար
Արմենուհի Սարգսյան
26.12.2024

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Արմենուհի Սարգսյան**- ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ, փորձագիտական խմբի ղեկավար:
2. **Կարինե Մնացականյան** - Երևանի հենակետային բժշկական քոլեջի «Ընդհանուր բժշկական մոդուլների, մանրէաբանության, հիգիենայի և էկոլոգիայի, վարակիչ, մաշկային, սեռավարակ հիվանդությունների» ամբիոնի դասախոս, մեթոդիստ, փորձագիտական խմբի անդամ:
3. **Աիդա Դաբաղյան**- Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի որակի պատասխանատու, կադրային հարցերով տնօրենի օգնական:
4. **Ինևա Մելքոնյան**- ուսանող-փորձագետ, Հայ-Ռուսական համալսարանի ուսանողուհի:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում՝ համակարգողը, ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

ԱՏՊՔ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար (05.02.2024*)* ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո (29.02.2024) ԱՏՊՔ և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատությունների՝ ինքնավերլուծություն իրականացնելու կարողությունների պակասը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման կարևորությունը՝ ՈԱԱԿ–ը սույն թվականի փետրվար ամսին իրականացրել է 4-օրյա առցանց աշխատաժողովներ, քոլեջի ներիկայացուցիչների համար:Աշխատաժողովների ընթացքում հավատարմագրվող ուսումնական հաստատություններին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները ՄԿՈՒ հաստատությունների համար, ինստիտուցիոնալ հավատարմագրման հարցաշարը, ինքնավերլուծության ձևաչափը, SWOT վերլուծության իրականացման սկզբունքները և այլն:

Քոլեջին ընթացիկ աջակցություն տրամադրելու և ընթացիկ հարցերին պատասխանելու նպատակով կազմակերպվել են նաև միջանկյալ հանդիպումներ:

ԱՏՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների վերանայված ինքնավերլուծությունը ներկայացվել է 02.07.2024թ: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության աշխատակիցների՝ ղեկավար կազմի, վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի կողմից:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց:

Նախնական այց

26.09.2024թ. իրականացել է նախնական այց ԱՊՏՔ: Հանդիպում է կազմակերպվել ՄՈՒՀ-ի ղեկավար կազմի, փորձագիտական խմբի հետ, իրականացվել դասալսումներ, ռոսուրսների դիտարկում քոլեջի 3 մասնաշենքերում, այցելել պրակտիկաների բազա (Արմավիր ԲԿ): Քոլեջի ղեկավար կազմին է ներկայացվել և համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել հոկտեմբերի 1-3 ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք քոլեջի կողմից տրամադրված ցանկից՝ պատահականության սկզբունքով: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, ինչպես նաև իրականացվել՝ դասալսումներ, ռեսուրսերի դիտարկում և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Նախնական զեկույցը տրամադրվել է Քոլեջին 28-ը նոյեմբերի 2024թ.: Զեկույցի

նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջն իր արձագանքն ուղարկել է ՈԱԱԿ 12.12.2024 թ.-ին: ՈԱԱԿ-ը քոլեջի դիտարկումները տրամադրել է փորձագետներին: Այնուհետև ՈԱԱԿ-ը կազմակերպել է քոլեջի և փորձագիտական խմբի հանդիպում, որի ժամանակ քննարկվել են հաստատության դիտարկումները փորձագիտական նախնական զեկույցի վերաբերյալ: Հանդիպումը տեղի է ունեցել ՈԱԱԿ-ում դեկտեմբերի 25-ին: Հաշվի առնելով այդ դիտարկումները՝ փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 26.12.2024թ.-ին:

_____

Լիլիթ Ղազարյան
Փորձագիտական խմբի համակարգող

26.12.2024թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր: «Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ըստ կառավարության 24.08.2023 թ.-ի N 1432-Ա որոշման նաև Արմավիրի պետական բժշկական և Արմավիրի պետական ինդուստրիալ մանկավարժական քոլեջների իրավահաջորդն է: Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջի առաքելությունը ձևակերպված է 2024-2029 թվականների Ռազմավարական ծրագրում (այսուհետ՝ ՌԾ): Քոլեջի առաքելությունն է՝

1. Տարածաշրջանային առանձնահատկությունների հաշվառմամբ գյուղատնտեսության՝ որպես առաջնահերթ ոլորտի, ինչպես նաև բժշկական, բիզնեսի, տրանսպորտային ծառայությունների, տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների և այլ ոլորտների մասնագիտական կրթական ծրագրերի (այսուհետ՝ ՄԿԾ) որակյալ իրականացումը, ուսանողներին անհրաժեշտ գիտելիքներով, կարողություններով, հմտություններով, արժեքային հատկանիշներով զինումը, մրցունակ և որակյալ մասնագետների պատրաստումը, ուսումնամեթոդական, դաստիարակչական, սոցիալ-մշակութային գործառույթների իրականացումը՝ միտված բարելավել ոլորտների ձեռնարկատերերի, գործատուների, արտաքին շահառուների պահանջարկները:
2. Քոլեջի նպատակն է ապահովել դասախոսների ու վարչատնտեսական աշխատակիցների, ինչպես նաև ուսանողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, մասնագետների մրցունակության բարձրացումը աշխատաշուկայում, կրթական ծրագրերի համապատասխանեցումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, նպաստել ազգային և համամարդկային ոգով դաստիարակված անձի և քաղաքացու համակողմանի ձևավորմանը:

Քոլեջը միջին մասնագիտական կրթություն է կազմակերպում ՈԱՇ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներին համապատասխան: Զարգացման ռազմավարական ծրագրով սահմանված են քոլեջի հիմնարար սկզբունքները, տեսլականը և հիմնախնդիրները: Նշենք, որ տեսլականի ներքո սահմանվում են քոլեջի առջև դրված նպատակները:

ՌԾ-ում առանձնացվում է 8 հիմնախնդիր, որոնց լուծմանն ուղղված կազմվել է պլան-ժամանակացույց, որտեղ նշված են խնդիրներ, գործողություններ, պատասխանատուներ/կատարողներ, որպես վերջնաժամկետ հիմնականում նշված է 2024-2029 թթ., իսկ ռեսուրսներ բաժնում նշումներն հիմնականում բացակայում են, միայն որոշ գործողությունների պարագայում նշում են քոլեջի բյուջե, արտաբյուջե կամ պետական բյուջե:

Պլան-ժամանակացույցը չի արտահայտում ֆինանսական ռեսուրսների հստակ նախատեսումներ, առկա չեն սահմանված արդյունքներ և ցուցիչներ։

Փորձագիտական այցից պարզվեց, որ ՌԾ-ով նախատեսված շենքային պայմանների բարելավման գործընթացը պայմանավորված է պետության կողմից նոր շենքի կառուցման հանգամանքով, որն, ըստ քոլեջի շահակիցների, դեռևս նախատեսվում է սկսել 2025 թ.-ին, սակայն ավարտի վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ: Փորձագիտական այցից պարզվեց նաև, որ, ընդհանրապես, հիմնականում բարեփոխումները պայմանավորեցնում են այս շենքային նոր պայմանների պատրաստ լինելու հանգամանքի հետ, այդ թվում նաև կառավարման համակարգի բարելավումը, մասնավորաբար հաստիքացուցակի և գործառույթների բաշխման խնդիրների լուծումը և այլն, որոնք ևս ՌԾ-ով նախատեսված գործընթացներ են:

Սահմանված նպատակների իրականացման ուղղությամբ դեռևս քայլեր չեն իրականացվել, չնայած, որ ՌԾ 2024 թ.-ի գործողությունների կատարման պլանի համաձայն ըստ ՌԾ հիմնախնդիրների նախատեսված է 37 գործողություն, որոնց համար սահմանել են վերջնարդյունքներ, որոնք սակայն չափելի չեն (օրինակ՝ առաջարկությունների ներկայացում ՄԿՈՒԶԱԿ, դասալսումների քանակի աճ, լուսաբանված միջոցառումներ, հայտարարություններ և այլն): Փորձագիտական այցից պարզվեց, որ քոլեջը քայլեր է ձեռնարկել կրթական ծրագրերում որոշ բարեփոխումներ իրականացնելու ուղղությամբ, որը նաև նախատեսված է 2024 թ.-ի գործողությունների կատարման պլանով, սակայն դրա հետ մեկտեղ դեռևս գործածվում են 2022, 2023 թթ.-ին կամ ավելի վաղ հաստատված կրթական ծրագրեր:

Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջի ներքին շահակիցներն են ուսանողները, դասախոսները, արտաքին շահակիցներն են գործատուները, շրջանավարտները, ծնողները: ՌԾ-ն մշակելիս կարիքների վերհանում չի իրականացվել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի և՛ ներքին, և՛ արտաքին շահակիցները հիմնականում իրազեկ չեն ՌԾ-ում սահմանված նպատակներից:Մասնավորաբար, հարկ է նշել, որ քոլեջը չի դիտարկում միջազգայնացումը որպես նպատակ, չնայած, որ նշել է ՌԾ-ում: Շահակիցները նաև հատկանշական կողմ չեն առանձնացրել քոլեջի, որպես նախկին 3 հաստատությունների իրավահաջորդի, այս տեսանկյունից նաև հնարավորությունների դաշտի վերանայում չի իրականացվել, ի տարբերություն մինչ հաստատությունների միավորվելը: ՌԾ մշակմանը նախորդող հետազոտություններն ու վերլուծություններն՝ ուղղված ներքին մարդկային, նյութական ռեսուրսների, ներքին և արտաքին շահակիցների կարիքների և ակնկալիքների ուսումնասիրմանը և հնարավորությունների բացահայտմանն ու ռիսկերի գնահատմանը և այլն, բացակայում են: Քոլեջը նաև աշխատաշուկայի վերլուծություն չի իրականացրել:

Փորձագիտական այցից պարզվեց, որ գործատուների հետ կապը բավականին թույլ է, և նոր կրթական ծրագրեր ներդնելու վերաբերյալ հարցը ղեկավար կազմի ներկայացուցիչները կապում են իրենց կողմից արված որոշ դիտարկումների հետ, որոնք սակայն դեռևս հիմք չեն հանդիսացել համընդգրկուն ուսումնասիրություններ կատարելու և գործուն քայլեր ձեռնարկելու համար: Փորձագիտական այցից պարզվեց նաև, որ քոլեջի կապը

համայնքապետարանի հետ կարևորվում է երկուստեք, և համայնքապետարանը նախակրթարաններում աշխատակիցների համալրման հարցը կապում է քոլեջի հետ:

Որպես այդպիսին ՌԾ գնահատման հստակ մեխանիզմներ քոլեջում առկա չեն: Քոլեջի հաշվետվությունները փոխկապակցված չեն ՌԾ նպատակների հետ: Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ, քոլեջի գործունեությունը գլխավորապես ուղղված է ուսումնական գործընթացի կազմակերպմանը, սակայն դեռևս չեն դիտարկվում գործընթացի առավել արդյունավետ իրականացման խնդիրները և ՌԾ հիմնախնդիրները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը կարևորում է ԱՏՊՔ-ի առանձնահատուկ, ինչպես նաև միավորումից հետո, գրեթե մենաշնորհային դիրքը և դրանով իսկ՝ անժխտելի արժևորությունը տարածաշրջանի համար՝ որպես ՈԱՇ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներում կրթություն իրականացնող հաստատության: Փորձագիտական խումբը կարևորում է նաև, որ քոլեջն իր առաքելությամբ ընդգծել է տարածաշրջանի առանձնահատկություններով պայմանավորված կրթական ոլորտներ և գնահատում է քոլեջի՝ համայնքապետարանի հետ ունեցած կապը: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը կարևորում է, որ առաքելության ու նպատակների ձևավորումը հենված լինի համընդգրկուն ուսումնասիրությունների վրա՝ ներքին և արտաքին շահակիցների ներգրավմամբ: Քանի որ այդ ամենը կարող է նպաստել աշխատաշուկայի պահանջներին համապատասխան գործունեության ծավալմանը, մի շարք զարգացման հնարավորությունների դիտարկմանը, եղած մարդկային և նյութական ռեսուրսների լիարժեք արդյունավետությամբ կիրառմանն, ինչպես նաև որպես մեկ ամբողջական հաստատության կայացմանը:

Փորձագիտական խումբը նշում է, որ չնայած քոլեջը կազմել է հնգամյա զարգացման ՌԾ և գործողությունների իրականացման պլան-ժամանակացույց, առանձնացրել է դրանից բխող 2024 թ.-ի գործողությունների պլան, սակայն ստորաբաժանումների կարճաժամկետ պլանների և ՌԾ նպատակների ու խնդիրների կապը չի երևում: Սա նախ ստեղծում է խնդիրներ կարճաժամկետ արդյունքների ապահովման տեսանկյունից, ինչն էլ իր հերթին կարող է խոչընդոտել ՌԾ նպատակների իրագործելիությունը: Մինչդեռ կարճաժամկետ և երկարաժամկետ պլանների փոխկապակցվածությունը առաջին անհրաժեշտ քայլն է՝ ստեղծելու երաշխիքներ ՌԾ նպատակների իրագործելիության համար: Փորձագիտական խումբը կարևորում է նաև, որ ՌԾ-ն ընդգրկի զարգացման բոլոր ուղղություններն, ինչպես նաև ունենա հստակ և չափելի նպատակներ և դրանց հացնելու գործողություններ և սահմանված ցուցիչներ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՏՊՔ-ն առանձնահատուկ դեր ունի տարածաշրջանում, ծավալում է գործունեություն, որն ուղղված է ՈԱՇ-ի 4-րդ և 5-րդ մակարդակների կրթական ծրագրերով նախատեսված հիմնական արդյունքների ապահովմանը, կարևորել է ռազմավարական հիմնախնդիրների սահմանումը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՏՊՔ-ը **բավարարում է** չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր: Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջի կառավարումն իրականացվում է տնօրենի, Կառավարման և Մանկավարժական խորհուրդների կողմից:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջի ՌԾ պլան-ժամանակացույցում տեսանելի չեն ռազմավարական նպատակներին հասնելու քայլերը և պլանավորված գործողությունների իրականացման համար պահանջվող ֆինանսական միջոցները: Ֆինանսների բաշխումը քոլեջն իրականացնում է միայն տարեկան պլանավորմամբ, 2023 թ.-ի ֆինանսատնտեսական հաշվետվության հիման վրա ծախսերի հիմնական ուղղություններն են՝ աշխատակիցների աշխատավարձերը շուրջ 85%, կրթաթոշակներ շուրջ 10%, ծառայությունների և ապրանքների ձեռք բերման ծախսեր շուրջ **5**%: 2024 թ.-ի ֆինանսատնտեսական նախահաշվի նախագծի հիման վրա, ծախսերի հիմնական ուղղություններն են՝ աշխատակիցների աշխատավարձերը շուրջ 73%, կրթաթոշակներ շուրջ 11%, շենքերի և շինությունների կառուցում շուրջ 10%, ծառայությունների և ապրանքների ձեռք բերման ծախսեր շուրջ 5%, որոնցից նյութերի համար՝ շուրջ 1.5%: Ընդ որում հարկ է նշել, որ 2024 թ.-ի նախահաշվի նախագծով նախատեսվող ծախսերի բյուջեն գրեթե 2 անգամ գերազանցում է 2023 թ.-ի փաստացի ծախսերի բյուջեն (արդեն լիարժեք միավորված հաստատություն): Նյութերի ձեռքբերումն իրականացվում է՝ հիմք ընդունելով ստորաբաժանումների ներկայացրած զեկուցագրերը:

ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքում ներկայացված են ուղղահայաց կապերը, հորիզոնական կապեր արտահայտված չեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի հաստիքային աշխատողները հիմնականում վարչական աշխատանքին զուգընթաց նաև դասավանդում են, սակայն հիմնականում առկա չեն տարատեսակ վարչական գործառույթների մեկտեղման դեպքեր: Տարիֆիկացիայի ուսումնասիրումը ցույց տվեց, որ բավականին շատ են նույնանուն հաստիքները (տնօրենի օգնական-գործավար՝ 4 անձ, գործավար՝ 1 անձ, կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով կազմակերպիչ՝ 2 անձ, գրադարանավար՝ 2 անձ, արխիվավար՝ 3 անձ, ուսումնական մասի ղեկավար՝ 3 անձ, կարիերայի պատասխանատու՝ 3 անձ, տնտեսվար՝ 4 անձ, որակի պատասխանատու՝ 2 անձ, կադրերի բաժնի տեսուչ՝ 3 անձ և այլն): Փորձագիտական այցից պարզվեց, որ նշվածը քոլեջը պայմանավորեցնում է 3 հաստատությունների միավորմամբ, հաստատությունում ստեղծված

բարոյահոգեբանական դժվարին իրողությունների և սոցիալական խնդիրների հաղթահարմամբ: Բարոյահոգեբանական խնդիրների հաղթահարումը եղել է քոլեջի ղեկավար կազմի գլխավոր խնդիրը դեռևս հաստատությունների միավորումից առաջ և ապա՝ դրանից հետո: Բոլոր հաստիքների համար 2023 թ.-ի դեկտեմբերի 28-ին հաստատվել են պաշտոնների անձնագրեր: Փորձագիտական այցից պարզվեց, որ դեռևս առկա են գործառույթների և պատասխանատվությունների բաշխման անհստակություններ, ինչպես նաև մի շարք գործառութային կրկնություններ, նաև՝ տարանուն հաստիքների պարագայում (մասնավորապես՝ուսումնաարտադրական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, պրակտիկայի բաժնի ղեկավար, ոլորտային մասնագիտությունների բաժնի ղեկավար, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ և կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով կազմակերպիչ): Փորձագիտական այցից պարզվեց, որ դեռևս տարբեր պատասխանատուների գործառույթներ արտահայտվում են ըստ առանձին մասնաշենքերի՝ սահմանափակվելով այդ մասնաշենքում կազմակերպվող համապատասխան մասնագիտությունների շրջանակով, թույլ է համագործացությունը նույնիսկ նույնանուն հաստիքներով աշխատակիցների միջև: Սակայն հարկ է նշել, որ գործառույթների միայն համապատասխան մասնաշենքերով սահմանափակվածության հանգամանքը արտահայտված չէ պաշտոնների անձնագրերում կամ այլ փաստաթղթերում:

Փորձագիտական այցից պարզվեց, որ հստակ չէ նաև նույնանուն հաստիքներով տարբեր պատասխանատուների գործառույթների բաշխումը (որակի ապահովման պատասխանատու, կարիերայի պատասխանատու և այլն): Քոլեջի ղեկավար կազմը խնդրի լուծումը պայմանավորեցնում է նոր կառուցված մասնաշենք ունենալու հանգամանքով, չնայած որ ՌԾ պլան-ժամանակացույցով 2025 թ.-ին նախատեսված է վերանայել և լրամշակել պաշտոնի անձնագրեր՝ վարչական, ուսումնաօժանդակ, դասախոսական կազմի համար, սակայն դեռևս առկա չեն լրամշակման համար ձևավորված մոտեցումներ:

Քոլեջում գործող խորհուրդների, ստորաբաժանումների գործունեությունը և լիազորությունների շրջանակը սահմանող իրավական ուժ ունեցող փաստաթղթեր են ԱՏՊՔ-ի կանոնադրությունը, Կառավարման խորհրդի աշխատակարգը, Առարկայական հանձնաժողովի գործունեության կանոնակարգը, Բուժկետի կանոնակարգը, ՈւԽ կանոնակարգը, Պաշտոնների անձնագրերը: Արտաքին գնահատման համար ներկայացված են մի շարք փաստաթղթեր՝ 2018 թ.-ին հաստատված Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջի ուսումնամեթոդական խորհրդի գործունեության կարգ, 2018 թ.-ին հաստատված Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջի մանկավարժական կազմից կոլեգիալ կառավարման մարմնի անդամի ընտրության ընթացակարգ և այլն, որոնք իրավահաջորդ հաստատության փաստաթղթեր չեն, ուստի և 24.08.2023 թ.-ի N 1432-Ա որոշման արդյունքում այլևս գործածելի չեն: Այս պարագայում դեռևս մի շարք ստորաբաժանումների, հանձնախմբերի (հանձնաժողովների) և խորհուրդների

[2]աշխատանքը կանոնակարգող փաստաթղթեր առկա չեն: Նաև առկա են փաստաթղթեր, որոնք չնայած հաստատվել են վերամիավորումից հետո և իրավական հիմք ունեն, սակայն դրանք կիրառելի չեն, քանի որ ըստ բովանդակության չեն բխում քոլեջի անհրաժեշտություններից և հնարավորություններից (օրինակ՝ Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և ընթացակարգ):

Դասախոսական, ուսանողական համակազմերն ընդգրկված են կառավարման և մանկավարժական (միայն դասախոսական) խորհուրդներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս խորհուրդներում ներգրավված ուսանողները և դասախոսները նախաձեռնողականություն չեն ցուցաբերում կարիքների վերհանման համար: Տեսանելի չեն նաև նիստերի արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տարածման և մյուս շահակիցներին դրանց մասին իրազեկման քայլեր:

Քոլեջն ունի մշակված ռազմավարական՝ երկարաժամկետ և 2024 թ.-ի տարեկան՝ կարճաժամկետ պլաններ: Ստորաբաժանումների աշխատանքային պլանները կազմվում են տարեկան՝ կարճաժամկետ պլանավորմամբ: Պլանավորման փաստաթղթերի դիտարկումը ցույց տվեց, որ դրանցում հիմնականում ներկայացվում են գործառութային շրջանակով պայմանավորված պարբերաբար կրկնվող գործողություններ: Քոլեջը չի ներկայացրել վերջին 5 տարիների աշխատանքային պլաններ, ինչը թույլ չի տալիս համեմատություն իրականացնել ըստ տարիների, ներկայացված են միայն 2023-2024 ուստարվա աշխատանքային պլաններ: Փորձագիտական այցի ընթացքում ևս աշխատանքային պլանները չեն համալրվել, նաև՝ 2024-2025 ուստարվա համար: Ներկայացված աշխատանքային պլաններում չի ընդգծվել ՌԾ հիմնախնդիրները: Ընդհանուր առմամբ՝ աշխատանքային պլաններում սահմանված վերջնարդյունքներ առկա չեն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քոլեջում կառավարումն իրականացվում է վերևից ներքև ուղղահայաց կառավարմամբ, իսկ հաշվետվողականությունը՝ ներքևից վերև, սակայն հաշվետվողականության համակարգն ամբողջությամբ ձևավորված չէ դեռևս: Ստորաբաժանումների միջև կապերը թույլ են զարգացած: Ստորաբաժանումների 2023-2024 ուստարվա աշխատանքային պլանները գլխավորապես ներառում են ուսումնական գործընթացի ապահովմամբ պայմանավորված պարբերաբար կրկնվող գործողություններ, մի քանի կատարող/պատասխանատուների պարագայում էլ հստակ չեն պատասխանատվությունների բաշխումը: Մի շարք աշխատանքային պլաններում նշվում է համապատասխան անվամբ հաստիքը զբաղեցնող միայն 1 անձի անունը, մինչդեռ նույնանուն հաստիք են զբաղեցնում նաև այլ անձինք և այս պարագայում տեսանելի չէ, թե ինչ գործունեություն են ծավալել մյուսները և ինչպիսին է եղել համագործակցությունը նրանց միջև և այլ ստորաբաժանումների հետ:

Առկա են որոշ ստորաբաժանումների կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ, սակայն դրանք դեռևս չեն ծառայում որպես մշտադիտարկման

[2] Նախադասությունը վերաձևակերպվել է քոլեջի կողմից տրված դիտարկումների հիման վրա:

մեխանիզմ: Հաշվետվությունների դիտարկումը ցույց է տալիս, որ հաշվետվությունների մեջ արտահայտված չէ վերլուծական բաղադրիչը, դրանք հիմնականում նկարագրական են:

Քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն չի կատարվել նախորդ ռազմավարական ծրագրի կատարողականի վերլուծության և նոր ՌԾ-ում ներկայացված SWOT վերլուծության միջոցով: Արդյունքում ՌԾ-ում ներկայացված քոլեջի հիմնախնդիրները վերլուծության հենքով չեն բացահայտվել: Քոլեջը այժմ հաստատված ՌԾ-ին նախորդող ՌԾ չի ներկայացրել:

Ուսումնասիրություններից և փորձագիտական այցից պարզվեց, որ քոլեջը նոր է ձեռնարկում որակի ապահովման համակարգի ներդրումն ու վերլուծությունների գործիքակազմերի և մեխանիզմների մշակումը: Ըստ որակի ապահովման պատասխանատուի 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի հաշվետվության՝ ներկայացված են քոլեջում ուսումնառության վերաբերյալ և կառավարման և վարչական կառույցների գործունեության արդյունավետության գնահատման վերաբերյալ հարցումների արդյունքներ:

Սակայն հարցարաններում հիմնականում շեշտադրված են առանձին անձերի ուղիղ գնահատում, առկա չեն սոցիոլոգիական և հոգեբանական առանձնահատկություններ նկատի առնող և բարելավման ենթակա ուղղություններ բացահայտող հարցեր: Քոլեջը ՈԱԿ-ի հարցումների, ուսումնասիրությունների միջոցով դեռևս չի իրականացնում ներքին կարևոր խնդիրների վերհանում:

Քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների որոշակի դիտարկում իրականացվում է ղեկավար կազմի կողմից՝ գործատուների հետ պրակտիկաների կազմակերպման շրջանակում համագործակցության միջոցով: Քոլեջը գործատուների շրջանում հարցումներ, ուսումնասիրություններ դեռևս չի իրականացրել: Ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրության և ռիսկերի վերհանման համար մշակված հստակ գործիքակազմ քոլեջը դեռևս չունի:

Քոլեջը մի շարք փաստաթղթեր է մշակել: Փորձագիտական այցից պարզվեց, որ դրանցից որոշները թելադրված են հաստատության նոր վերաձևավորման հանգամանքով, մի շարք փաստաթղթերի մշակումն էլ պայմանավորված է եղել հավատարմագրման գործընթացով՝ անհրաժեշտությունը տեսել են ինքնավերլուծության իրականացման ընթացքում: Ընթացակարգերի, քաղաքականությունների գնահատման և այդ հենքով բարելավման գործընթաց չի իրականացվել, և այսպիսի փորձ առկա չէ նաև նախկին երեք քոլեջներում:

ՌԾ-ում ներկայացված նպատակները հստակ և արդյունահենք չեն, ըստ նպատակների և հիմնախնդիրների սահմանված արդյունքներ չկան:

Քոլեջը որոշ տեղեկատվություն է հավաքագրում ուսանողների առաջադիմության, հաճախումների վերաբերյալ, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կարծիքների վերաբերյալ, ինչպես նաև շրջանավարտների վերաբերյալ ըստ կարիերայի կենտրոնի կողմից ներկայացվող հաշվետվությունների: Սակայն քոլեջը չունի տեղեկատվության հավաքագրման վերլուծությունը և հավաքագրումը գնահատող մեխանիզմների արդյունավետությունը գնահատող գործիքակազմ:

Քոլեջն ունի ֆեյսբուքյան էջ, որտեղ լուսաբանվում են քոլեջի առօրյա գործընթացները, սակայն մասնավորապես քոլեջի ՄԿԾ-ների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում չի իրականացվում, դեռևս ապահովված չէ կառավարման որոշումների թափանցիկությունը արտաքին շահակիցների համար: Քոլեջը կրթական ծրագրերի, դասավանդման լավ փորձի, շրջանավարտների հաջողված պատմությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում չի իրականացնում, առկա չեն նման հրապարակումներ: Քոլեջը աշխատանքներ է իրականացնում կայքի ստեղծման ուղղությամբ, այս աշխատանքներն իրականացվում է որակի ապահովման պատասխանատուի կողմից:

Դատողություններ: Փորձագիտական խումբը նշում է, որ հաստատությունը վերամիավորումից հետո մի շարք աշխատանքներ է իրականացրել, ըստ քոլեջի հավաստման մեծ դժվարություններ են եղել բարոյահոգեբանական մթնոլորտի կարգավորման հարցում, ինչը տեղիք է տվել այս ուղղությամբ մեծ ջանքեր ներդնելու:

Փորձագիտական խումբը գնահատում է քոլեջի ջանքերն ուղղված երկարաժամկետ պլանավորման փորձին, սակայն հայտնում է իր մտահոգությունը, որ այդ պլանավորումը դեռևս չի վերածվել գիտակցված իրականանալի փաստաթղթի, թերևս այս հարցում խնդրահարույց են նաև պլանավորման մեջ առկա անհստակություններն ու այդ գործընթացի վերլուծահենք չլինելը: Մինչդեռ վերլուծությունների իրականացումը, տվյալների հավաքագրումը, ռիսկերի գնահատումը, կարիքների և հնարավորությունների բացահայտումը թույլ կտա ընդգծված խնդիրների հենքով հիմնախնդիրներ առաջադրել շահակիցների ներգրավմամբ, ինչպես նաև ֆինանսական, նյութական և մարդկային ռեսուրսների ու հնարավորությունների ճիշտ դիտարկմամբ երաշխավորել դրանց իրագործելիությունը, ապահովել քոլեջի զարգացումը: Հնարավորությունների լիարժեք բացահայտման արդյունքում կարևոր է, որ հաստատությունը քայլեր ձեռնարկի՝ ուղղված ֆինանսական մուտքերի բազմազանեցման ապահովմանը, ինչը թույլ կտա ռազմավարական ուղղություններով ֆինանսական պլանավորումներ իրականացնելու համար:

Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը մի շարք քայլեր է իրականացրել՝ ուղղված կառավարման համակարգի ձևավորմանը /քոլեջի կանոնադրության, պաշտոնների անձնագրերի և մի շարք այլ փաստաթղթերի մշակում ու հաստատում/, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը դեռևս չի կարողացել ձևավորել որպես միավորված հաստատության կառավարման արդյունավետ համակարգ՝ որը կբխեր հաստատության առջև ծառացած խնդիրներից և ռազմավարական նպատակներից, հաստատությունը դեռևս գտնվում է անցումային փուլում: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է նաև, որ քոլեջը գնահատի որպես մեկ ամբողջական հաստատության մարդկային ռեսուրսների հնարավորությունները և հստակեցնի գործառույթների ու պատասխանատվությունների տիրույթները, ինչը կնպաստի արդյունավետ գործող և կանոնակարգված կառավարման համակարգ ունենալուն:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ առկա են ինստիտուցիոնալ մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս դասախոսական և ուսանողական համակազմերին

ներգրավվելու իրենց վերաբերող որոշումների կայացմանը, սակայն այդ մեխանիզմների արդյունավետ իրացման համար կարևոր է, որ համապատասխան խորհուրդներում դասախասական և ուսանողական կազմերի ներկայացուցիչները ցուցաբերեն նախաձեռնողականություն և ապահովեն այդ համակազմերի լայն շրջանակների մոտեցումների ներկայացվածություն նշված խորհուրդներում իրենց վերաբերող հարցերի վերաբերյալ: Այս տեսանյունից կարևոր է նրանց կարիքների վերհանման մեխանիզմների լավարկումը, ինչպես նաև խորհուրդներում քննարկվելիք հարցերի վերաբերյալ շահակիցների լայն շրջանակի մոտեցումների ներկայացմանը և ապա՝ որոշումներից հետո նրանց իրազեկվածության ապահովումը:

Փորձագիտական խումբը նշում է, որ, չնայած քոլեջում առկա են որոշ առանձին տարեկան կարճաժամկետ պլանավորումներ, սակայն դրանք դեռևս հստակ կանոնակարգված չեն: Միաժամանակ փորձագիտական խումբը կարևորում է ստորաբաժանումների կարճաժամկետ պլանների և ՌԾ փոխկապակցվածության ապահովումը, քանի որ վերջիններիս իրականացման արդյունքում միայն կարող են ստեղծվել երաշխիքներ ռազմավարական նպատակների իրականացման համար: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է նաև հաշվետվողականության հստակ մեխանիզմի ներդրումը՝ ապահովելով ստորաբաժանումների աշխատանքների վերահսկողությունն ու մշտադիտարկումը: Իսկ վերլուծական բաղադրիչի ապահովումը թույլ կտա խնդրիների վերհանումն ու շարունակական բարելավման գործընթացների ապահովումը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը որոշակի ազդակներով փորձում է գնահատել քոլեջի վրա ազդող գործոնները, սակայն այդ ուղղությամբ համընդգրկուն ուսումնասիրությունների կարիք կա: Միաժամանակ կարևոր է որակի ներքին ապահովման համակարգի կայացումը, վերլուծական գործիքակազմերի և մեխանիզմների մշակումն ու գործածումը, ինչը թույլ կտա բացահայտելու քոլեջի գործունեության տարբեր ուղղություններով խնդիրներն ու ապահովել տվյալահենք կառավարում:

Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը կրթական գործընթացին վերաբերող որոշ տեղեկատվություն է հավաքագրում, սակայն այդ գործընթացի համար կիարռվող մեխանիղմների արդյունավետությունը գնահատող գործիքակազմ դեռևս առկա չէ, մինչդեռ դրանց գնահատումը թույլ կտար ընդլայնելու և բարելավելու այդ գործընթացները:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը ֆեյսբուքյան էջի միջոցով մի շարք գործընթացների վերաբերյալ իրազեկվածություն է ապահովում, բացի այդ կարևոր է, որ քոլեջն արդեն աշխատանքներ է ձեռնարկել կայքի ստեղծման և տեղեկատվությամբ համալրման ուղղությամբ: Սակայն փորձագիտական խումբը կարևորում է ՄԿԾ-ների որակի վերաբերյալ հրապարակումների և գործընթացների առավել թափանցիկության ապահովումը, քանի որ դրանք կարող են նպաստել քոլեջի հեղինակության առավել բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՏՊՔ-ը դեռևս գտնվում է անցումային փուլում, չի ներդրել համընդհանուր գործուն, արդյունավետ և կանոնակարգված կառավարման համակարգ, առկա է խզում կարճաժամկետ պլանավորումների և երկարաժամկետ ՌԾ հիմնախնդիրների միջև, առկա չէ հստակ աստիճանակարգված և խնդիրներ բացահայտող հաշվետվողականություն, նկատելի չէ ներքին շահակիցների ակտիվ ներգրավվածությունը իրենց վերաբերող որոշումների կայացմանը, հիմնական գործընթացները դեռևս ՊԻԳԲ շրջափուլով չեն իրականացվում, չեն ներդրվել քոլեջի հիմնական գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՏՊՔ-ը **չի բավարարում** չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր: Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջն իրականացնում է ՈԱՇ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներին համապատասխան միջին մասնագիտական և նախնական արհեստագործական կրթական ծրագրեր հիմնական կրթության հիմքով առկա և հեռակա ուսուցմամբ: Վերամիավորման արդյունքում ներկայումս քոլեջն իրականացնում է՝ առկա ուսուցմամբ հիմնական կրթության հիմքով միջին մասնագիտական կրթական ծրագրեր հետևյալ մասնագիտությունների գծով՝ Հաշվապահական հաշվառում (նաև հեռակա), Ֆինանսներ, Սոցիալական ապահովության կազմակերպում, Մենեջմենթ /կառավարում/,

Ապրանքագիտություն, Սառնարանային տնտեսություն, Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում, Կաթիլային ոռոգման համակարգերի մոնտաժում և շահագործում, Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն, Սպառողական ապրանքների որակի փորձաքննություն, Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում, Գյուղացիական/ֆերմերային/ տնտեսության կազմակերպում, Գյուղացիական /ֆերմերային/ տնտեսության կազմակերպում, Քույրական գործ, Մանկաբարձական գործ, Ատամնատեխնիկական գործ,

Դեղագործություն (նաև հեռակա), Բուժական կոսմետոլոգիա, Նախադպրոցական կրթություն (հեռակա), Ապահովագրական գործ, Կառավարում արտակարգ իրավիճակներում: Հաշվապահական հաշվառում, Ֆինանսներ, Մենեջմենթ /կառավարում/, Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն, Քույրական գործ,

Մանկաբարձական գործ, Ատամնատեխնիկական գործ, Դեղագործություն, Բուժական կոսմետոլոգիա, Նախադպրոցական կրթություն մասնագիտական ծրագրերը իրականացվում են նաև միջնակարգ կրթության հիմքով:

Քոլեջն իրականացնում է նաև առկա ուսուցմամբ հիմնական կրթության հիմքով նախնական մասնագիտական/ արհեստագործական/ կրթական ծրագրեր հետևյալ մասնագիտություններում՝ Խոհարարական գործ, Համակարգիչների շահագործում, Կարի արտադրության տեխնոլոգիա, Գեղարվեստական ձևավորման աշխատանքներ և դիզայն:

Վերջին 5 տարում Քոլեջը ստացել է կրթություն իրականացնելու թույլատվություն հիմնական կրթության հիմքով «Սառնարանային տնտեսություն», «Կաթիլային համակարգերի մոնտաժում և շահագործում», «Գյուղացիական/ֆերմերային/տնտեսության կազմակերպում», մասնագիտությունների համար: Ընդ որում, վերջին երկուսը ներառված են ՀՀ միջին մասնագիտական կրթական ծրագրերով ուսուցանվող առաջնահերթ մասնագիտությունների ցանկի մեջ:

Որպես տարածաշրջանային քոլեջ՝ հաստատության առաքելությունն է մասնագիտական կրթական ծրագրերի որակյալ իրականացումը՝ միտված բարելավելու ոլորտների ձեռնարկատերերի, գործատուների, արտաքին շահառուների պահանջարկները:

Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նոր մասնագիտությունների ներդրման համար աշխատաշուկայի ուսումնասիրություն քոլեջը չի իրականացրել:

Ծրագրերն իրականացվում են ՊԿՉ-ներով սահմանված պարտադիր նվազագույնի սահմաններում առանց աշխատաշուկայի կարիքներից բխող փոփոխությունների: Ինչպես նաև Քոլեջի դասախոսական կազմը չի մասնակցում պետական կրթական չափորոշիչների կազմմանը և վերանայմանը:[3]

Չնայած ՄԿԾ-ների մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման ռազմավարության իրականացումը Քոլեջը սահմանել է որպես ռազմավարական հիմնախնդիր՝ այնուամենայնիվ ՄԿԾ-ների մշտադիտարկման կանոնակարգ Քոլեջում առկա չէ: Փորձագիտական այցից պարզվեց, որ թեև վերամիավորումից հետո Քոլեջը չի իրականացրել ՄԿԾ-ների մշտադիտարկում և վերանայում, այնուամենայնիվ, փորձել է կատարել որոշ բարելավման աշխատանքներ. համադրելով 3 առանձին հաստատությունների ուսումնական պլանները, դասավանդման գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները՝ Քոլեջը փորձել է ներդնել դասավանդման միասնական մոտեցում, մասնավորապես, իրականացրել է մոդուլների հերթականության վերաբաշխում՝ պայմանավորված մոդուլների մուտքային պահանջներով, ներդրել է միասնական գնահատման թերթիկներ, կատարել է պահուստային ժամերի բաշխում, օրինակ, «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության կրթական ծրագրում ներդրվել են «Օրթոդոնտիկ ապարատների պատրաստման տեխնիկա» և «Դիմածնոտային ապարատների պատրաստման տեխնիկա» մոդուլները, իսկ «Դեղագործություն» մասնագիտության կրթական ծրագրում ներդրվել է «Դեղագործության տեխնիկա» մոդուլը:

[3] Նախադասությունը վերաձևակերպվել է քոլեջի կողմից տրված դիտարկումների հիման վրա:

Ընտրովի առարկաների մասով Քոլեջում աշխատանքները դեռ վերանայման փուլում են:Քոլեջի դասավանդողների առաջարկով «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության կրթական ծրագրում ներդնել «Իմպլանտոլոգիա» մոդուլը: Իրականացված բոլոր փոփոխություններն իրականացվել են Քոլեջի ուսումնական մասի նախաձեռնությամբ:

2023 թ. Քոլեջում հաստատվել է Պրակտիկաների կազմակերպման և անցկացման կարգ: Ուսումնական պլաններում առկա են պրակտիկայի հետևյալ տեսակները՝ Ուսումնական պրակտիկա տեսական ուսուցմամբ, Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման, Մասնագիտական պրակտիկա, որոնց տևողությունը ուսումնառության տարիների ընթացքում տարբեր է՝ կախված մասնագիտությունից (10-41 շաբաթ):

Ուսանողները պրակտիկայի հաճախում են պրակտիկայի ծրագրով և թեմատիկ պլանով, պրակտիկայի օրագրերով, որտեղ նշված են պրակտիկայի կազմակերպման մասին ցուցումներ: Պրակտիկայի վայրում օրագրի մեջ գրանցվում է ուսանողի կատարած աշխատանքի ծավալը, բովանդակությունը և որակը: Պրակտիկայի ավարտին պրակտիկայի անմիջական ղեկավարը ներկայացնում է ուսանողի բնութագիրը, իսկ ուսանողը հաշվետվություն է գրում իրականացրած աշխատանքների վերաբերյալ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ պրակտիկայի միավորային գնահատումն իրականացվում է Քոլեջի դասախոսի կողմից: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ պրակտիկաների ժամանակ ուսանողները հիմնականում դիտողի դերում են հանդես գալիս (օրինակ՝ «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում», «Կաթիլային ոռոգման համակարգերի մոնտաժում և շահագործում»): Սակայն առկա են դեպքեր, երբ ուսանողները գործնական որոշակի ներգրավվածություն են ունենում, մասնավորաբար՝ «Դեղագործություն» մասնագիտության ուսանողները հնարավորություն են ունենում դասավորել դեղերը պահեստում, ծանոթանալ դեղերի բաղադրություններին, ավելի ուշ նաև պատրաստել:

«Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» մասնագիտության ուսանողները հնարավորություն ունեն պրակտիկայի ընթացքում այցելել երկաթուղային կայարան, Ագրարային համալսարանի մասնագիտական լաբորատորիա: Իսկ «Կաթիլային ոռոգման համակարգերի մոնտաժում և շահագործում» մասնագիտության ուսանողները հնարավորություն են ունեցել շրջայց կատարելու «Կանաչ ուսումնական կենտրոն» (ծանոթացում գյուղատնտեսությանը բերքի տոնի շրջանակներում), Ոսկեհատ գյուղի ինտենսիվ այգիներ («Frutenia» ծրագրի շրջանակներում), Արտամետ գյուղում գտնվող «Անդերսըն» ֆերմերային տնտեսություն, Ագրարային համալսարանի մասնագիտական լաբորատորիաներ:

Քոլեջում 2023 թվականին հաստատվել է Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության և արդիականացման քաղաքականություն և ընթացակարգեր՝ համաձայն որի, մեթոդներն ընտրվում են դասընթացի նպատակներին և ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխան: Փորձագիտական այցից և դասալսումներից պարզ դարձավ, որ Քոլեջում դասախոսների կողմից կիրառվող դասավանդման մեթոդների

ընտրության միասնական մոտեցում դեռևս չի ձևավորվել: Մեծապես գերիշխում են դասախոսությունները, հարց ու պատասխանը, երբեմն կիրառվում է մտագրոհի մեթոդը:

Քոլեջում հիմնականում բացակայում է ժամանակակից ինտերակտիվ և ուսանողակենտրոն մեթոդների և առցանց ռեսուրսների կիրառման մշակույթը: Սակայն հարկ է նշել, որ առանձին դասավանդողներ դասընթացների շրջանակում կիրառում են փոխգործուն մեթոդներ և նույնիսկ այցեր են կազմակերպում տարբեր կազմակերպություններ՝ անձնական կապերի շրջանակում, մասնավորաբար՝ «Կաթիլային ոռոգման համակարգերի մոնտաժում և շահագործում» մասնագիտության որոշակի մոդուլի շրջանակում:

Դասալսումների և փորձագիտական հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ ուսանողներին տրվող հանձնարարականները հիմնականում ուղղված են գիտելիքի ձեռքբերմանը և բանավոր կամ գրավոր վերարտադրմանը, հարցաշարերում հարցերը տեսական բնույթի բաց հարցեր են (Բեռների ապրանքային դասակարգումը, Փոխադրումների կազմակերպման հիմնական սկզբունքները. «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում, Ջրօգտագործմանկազմակերպման գործընթացը, Ջրի որակի բարելավման ուղիները. «Կաթիլային ոռոգման համակարգերի մոնտաժում և շահագործում): «Դեղագործություն» մասնագիտության առաջադրանքները ներառում են նաև բազմակի ընտրության հարցեր, որոնք բավականին պարզ բովանդակություն ունեն: «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» մասնագիտական հարցաշարերից հանվել են խնդիրները, քանի որ ուսանողների համար խնդիրների լուծումը բարդ է եղել:

Փորձագիտական այցից պարզվեց, որ դրանք լուծելու հնարավորություն ունենում են միայն բարձր գնահատականի հավակնող ուսանողները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջում որպես հետազոտական աշխատանք հանձնարարվում են ռեֆերատներ, որոնք հիմնականում արտատպումներ են դասագրքերից, համացանցից և հետազոտական բաղադրիչ չեն պարունակում: Զուգահեռաբար պարզ դարձավ, որ «Ձեռներեցություն» մոդուլի շրջանակներում ուսանողները կազմում են ռեֆերատներ, որոնք իրենցից ներկայացնում են բիզնես-պլաններ, նպաստում են ձեռնարկատիրական հմտությունների ձևավորմանը և հետազոտական կարողությունների զարգացմանը:

Փորձագիտական այցից և դասալսումներից պարզվեց, որ դասախոսները ուսանողներին տրամադրում են մոդուլներին համապատասխան ուսումնական նյութեր թղթային կամ էլեկտրոնային եղանակով:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների կողմից ներկայացված հաշվետվություններում շեշտադրվել է գործնական հմտությունների ձևավորմանը միտված ուսումնական գործընթացի իրականացման անհրաժեշտությունը: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս մասով Քոլեջը դեռ լուրջ քայլեր չի ձեռնարկել: Միայն «Քույրական գործ» և «Մանկաբարձական գործ» մասնագիտության ուսանողները թերևս ունեն այս հնարավորությունը՝ շնորհիվ Արմավիր ԲԿ-ի հետ սերտ համագործակցության և

գործատու-դասախոսների ներգրավվածության: Ինչպես նաև այս մասնագիտությունների ուսանողները հնարավորություն ունեն օգտվել ԲԿ-ի ռեսուրսային բազայից և հատկացված առանձին լսարանից, որտեղ կազմակերպվում են պրակտիկ դասավանդողների կողմից իրականացվող դասերը:

Քոլեջը ինքնավերլուծությանը կից ներկայացրել է Արմավիրի պետական տարածաշրջանային քոլեջի ուսանողների գիտելիքների և կարողությունների ստուգման, ստուգարքների և քննությունների անցկացման, գնահատման և վերահանձնման կանոնակարգ, Արմավիրի պետական տարածաշրջանային քոլեջի հանրակրթական առարկաներից ուսանողի գիտելիքների ստուգման, պետական ավարտական քննությունների կազմակերպման, անցկացման, ստուգման, բողոքարկման, վերաքննության ընթացակարգ:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողները, համաձայն վերոնշյալ ընթացակարգի, կարող են փոխել իրենց գնահատականը տեղում բանավոր քննության ժամանակ, գրավոր քննության դեպքում՝ յուրաքանչյուր ուսանող բողոքարկումը պետք է անձամբ ներկայացնի գրավոր տեսքով ոչ ուշ, քան գնահատականը հայտարարելուց մեկ օր հետո: Գնահատականի բողոքարկման դեպքեր չեն գրանցվել:

Քոլեջում ընթացիկ գնահատման հստակ չափանիշներ սահմանված չեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ միավորային գնահատման միասնական համակարգ քոլեջում ներդրված չէ, դասախոսական կազմը գնահատելիս կարևորում է ուսանողի կողմից գիտելիքի հաղորդումը գրավոր կամ բանավոր ձևաչափով:

Բոլոր կրթական ծրագրերում ուսանողները հանձնում են պետական ամփոփիչ քննություններ, քննական հարցաշարերում առկա են տեսական հարցեր: Գործնական առաջադրանքներ չեն կատարվում:

Հարցաշարերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում առկա են տեսական գիտելիքները ստուգող հարցեր: Մոդուլային ծրագրերում ներկայացված է յուրաքանչյուր արդյունքի գնահատման ձևը, որը կարող է լինել հարց ու պատասխան, թեստային առաջադրանք, գործնական առաջադրանք: Քոլեջում առկա են Գնահատման թերթիկներ, որոնց ուսումնասիրությունը ցույց տվեց, որ յուրաքանչյուր արդյունքի գնահատման համար առկա են գրավոր տեսական հարցեր՝ անցել է/չի անցել նշումով:

Ուսանողները գնահատվում են նաև պրակտիկայի ընթացքում: Գնահատականներն արտահայտված են պրակտիկայի օրագրերում: Որպես այդպիսին պրակտիկայի գնահատման չափանիշներ սահմանված չեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ պրակտիկայի վերաբերյալ ուսանողը ներկայացնում է հաշվետվություն, պրակտիկայի անմիջական ղեկավարը տալիս է պրակտիկանտի բնութագիրը, իսկ գնահատումն իրականացվում է Քոլեջի պատասխանատուների կողմից (պրակտիկայի ղեկավար, դասախոս)՝ պրակտիկայի հաշվետվության և բնութագրի հիմա վրա:

ՄՈՒՀ-ը կրթական ծրագրերի բենչմարքինգ չի իրականացրել, մշտադիտարկման և բենչմարքինգի իրականացման կարգ և հստակ մեխանիզմներ ներդրված չեն: Բացի այդ, Քոլեջը չի իրականացրել տարբեր քննարկումներ տարածաշրջանի մյուս քոլեջների հետ: Չի ուսումնասիրել հայաստանյան և արտասահմանյան տարբեր քոլեջների լավագույն փորձը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջն իրականացնում է բազմաոլորտ կրթական ծրագրեր և վերջին 5 տարիների ընթացքում էլ ներդրել է պետության կողմից գերակա համարվող 2 նոր կրթական ծրագիր, սակայն փորձագիտական խմբի դիտարկմամբ աշխատաշուկայի ուսունասիրությունը և ՄԿԾ-ների կազմմանը արտաքին շահակիցների ներգրավումը հնարավորություն կտա ապահովել

Քոլեջի առաքելությանը համահունչ կրթություն: Կրթական ծրագրերի արդյունավետությունն ու շարունակականությունը ապահովելու նպատակով փորձագիտական խումբը կարևոր է համարում նաև բենչմարքինգի իրականացումը հայաստանյան և միջազգային այլ քոլեջների հետ:

Փորձագիտական խումբը դրական է համարում գնահատման թերթիկների ներդրման գաղափարը, ինչը թույլ է տալիս ներդնել արդյունքների գնահատման միասնական ձևաչափ: Սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ գործնական առաջադրանքների առկայությունը կնպաստի ՄԿԾ-ների վերջնարդյունքների լիարժեք ապահովմանը: Փորձագիտական խումբը կարևորում է նաև գնահատման հստակ չափանիշների ներդրումը, ինչը կնպաստի գնահատման միասնական համակարգի ձևավորմանը և գնահատման գործընթացի հստակեցմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ուսանողների կողմից բողոքարկման կարգի մասին տեղեկացվածությունը, ինչը նպաստում է գնահատման գործընթացի արդարությանն ու թափանցիկությանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում առանձին դասավանդողների կողմից հետազոտական և վերլուծական հմտություններ ձևավորող հանձնարարականների ներդրումը, սակայն մտահոգիչ է, որ այդ մոտեցումները միայն առանձին դեպքերում են արտահայտված, իսկ ընդհանուր առմամբ, նման հմտությունների ձևավորման գործընթացը բացակայում է, և հետազոտական ուղղության զարգացումը Քոլեջի համար ռազմավարական նպատակ չի հանդիսանում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության և արդիականացման քաղաքականության մշակումը Քոլեջի կողմից, ինչի շնորհիվ հնարավոր կլինի ապահովել ժամանակակից, ուսանողների կարիքներին համահունչ ուսումնական գործընթացի կազմակերպումը՝ նորարարական մեթոդների կիրառմամբ: Սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջի կողմից դասավանդման նորարար ինտերակտիվ և ուսանողակենտրոն մեթոդների կիրառման առաջնահերթության սահմանման անհրաժեշտություն կա, որը կբարձրացնի ուսումնական գործընթացի արդյունավետությունը և ուսանողների մոտիվացիան:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը առաջնահերթ դիտարկի տարբեր մասնագիտությունների գծով գործատուների հետ կնքվող պայմանագրերի թվի ավելացումը և պրակտիկաների ընթացքում ուսանողներին գործնական առաջադրանքներ տալու հնարավորությունը, ինչը կարող է նպաստել ուսանողների գործնական կարողությունների զարգացմանը: Ինչպես նաև սա հնարավորություն կտա սահմանել պրակտիկայի

գնահատման չափանիշներ՝ միաժամանակ ներառելով ուսանողի պրակտիկայի գնահատում անմիջական ղեկավարի կողմից:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների կողմից առաջարկների ներառմամբ հաշվետվությունների ներկայացումը, ինչը կրթական ծրագրերի վերանայման հնարավորություն է ստեղծում: Սակայն փորձագիտական խումբը կարևոր է համարում այդ առաջարկների հիման վրա Քոլեջի կողմից վերանայումների և բարելավումների իրականացումը, ինչը կնպաստի աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ կրթություն ապահովելուն և մրցունակ շրջանավարտներ թողարկելուն, այս տեսանկյունից կարևոր է համընդգրկուն տվյալների հավաքագրման ապահովումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Քոլեջը, համաձայն իր առաքելության, իրականացնում է բազմաոլորտ կրթական ծրագրեր, որոնք համապատասխանում են ՈԱՇ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներին, կազմված են համաձայն ՊԿՉ-ների և կարևոր են համայնքի զարգացման տեսանկյունից, առկա են մոդուլներին համապատասխան ուսումնական նյութեր, բժշկական մասնագիտությունների մասով գործատուի ռեսուրսային հնարավորությունների օգտագործում, ձեռնարկել են ՄԿԾ-ների բարելավման որոշակի գործընթացներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՏՊՔ-ն **բավարարում է** 3-րդ չափանիշի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր: ԱՏՊՔ-ում ընդունելությունը կազմակերպվում է առցանց՝ dimord.emis.am կայքի միջոցով, հիմնական և միջնակարգ կրթության վրա: Ընդունելության մասին քոլեջը շահակիցներին տեղեկացնում է ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերի միջոցով, ինչպես նաև դիմորդների հավաքագրման նպատակով նախապատրաստական այցեր է իրականացնում մարզի դպրոցներ և կազմակերպում տեղեկատվական հանդիպումներ: Քոլեջի կարիերայի կենտրոնի կողմից կազմակերպվում են «Բաց դռների օրեր» դպրոցների աշակերտների և ծնողների համար, որի ժամանակ ծանոթացնում են քոլեջի ծավալած գործունեությանը, իրականացվող մասնագիտություններին, առկա ռեսուրսներին և քննարկում իրենց հետաքրքրող հարցերը:

Քոլեջում ընդունելությունը կազմակերպվում է ՀՀ ԿԳՍՄ «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության» կարգի համաձայն:

Ընդունելությունը բժշկական ոլորտում իրականացվում է «Կենսաբանություն» առարկայից բանավոր քննության արդյունքների հիման վրա։

ՄՈՒՀ-ում 2020-2024 ուսումնական տարվա ընդունելության արդյունքում նկատվում է ուսանողների թվաքանակի կայուն աճ։ Ներկայումս քոլեջում սովորում են 1400 ուսանող՝ առկա ուսուցմամբ և 56 ուսանող՝ հեռակա ուսուցմամբ։

Ուսանողների կրթական կարիքների վերհանման մշակված քաղաքականություն առկա չէ։ Ուսանողների կրթական կարիքների վերհանման գլխավոր նախադրյալն է հանդիսանում կուրսղեկների հետ կապը։ Կուրսղեկները ուսանողներին տրամադրում են ընթացիկ աջակցություն, բացակայությունների պարագայում կապ են հաստատում ուսանողների հետ։ Իրենք անհրաժեշտության դեպքում իրականացնում են խորհրդատվություններ, կազմակերպադաստիարակչական աշխատանքներ, դասախոսություններ, քննարկումներ հետևյալ թեմաներով՝ Թրաֆիքինգի, Թմրամոլության,Ալկոհոլի վնասակար ազդեցության, Առողջ ապրելակերպի և այլն։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները որոշ դեպքերում դասերից հետո հարցեր են ուղղում դասախոսին՝ կապված դասի բովանդակության հետ։ Քոլեջում առկա է նաև Ուսանողական խորհուրդ, որը սակայն գլխավորապես միջոցառումներ կազմակերպելու ուղղությամբ է գործունեություն ծավալում։

Քոլեջում կազմակերպվում են խորհրդատվություններ քննություններից առաջ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ խորհրդատվությունների հստակ սահմանված ժամանակացույց առկա չէ, խորհրդատվությունների մասին ուսանողները տեղեկանում են համապատասխան դասախոսների կամ կուրսղեկների միջոցով։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները Հաճախ կայանալիք խորհրդատվության ամսաթիվերը համաձայնեցնում են դասախոսների հետ։ Ուսումնասիրություններից պարզվեց, որ քոլեջում դեռևս չեն նախատեսվում լրացուցիչ պարապմունքների իրականացում։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԱՏՊՔ-ն ուսանողների համար չի սահմանել վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց։ Ուսանողները ազատ են իրենց հուզող ընթացիկ կրթական և անձնական հարցերով դիմելու ցանկացած ստորաբաժանման աշխատակցի՝ չսահմանափակվելով ժամկետներով։

Չնայած այն փաստին, որ քոլեջում գործում է Կարիերայի կենտրոն, սակայն հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողների մի մասն էր տեղյակ կենտրոնի մասին։ Կարիերայի կենտրոնը կազակերպում է հանդիպումներ ուսանողների, շրջանավարտների և գործատուների միջև, իրականացվում է հարցումներ, փորձի փոխանակում։ Շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջն ունի պայմանագիր ՀՀ բուհերի հետ՝ ՀԱԱՀ ԲՊՀ, Հայաստանում Եվրոպական համալսարան, ՀԱՊՀ–ի հետ, որոնց շնորհիվ ուսանողները հնարավորություն են ստանում շարունակել իրենց կրթությունը բուհերի հեռակա բաժիններում՝ 2-րդ կուրսում։ Կարիերայի կենտրոնը դեռևս չի հավաքագրում համընդգրկուն տվյալներ շրջանավարտների վերաբերյալ և չի վերլուծում այն տվյալները, որոնք ներկայացնում է ԿԳՄՄՆ։ Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ չնայած Կարիերայի կենտրոնը կազմում է պլան ժամանակացույց, սակայն վերջինս անհստակ է, բացի այդ, թույլ է

արտահայտված Կարիերակի կենտրոնի պատասխանատուների միջև համագործակցությունը: Առկա չեն շրջանավարտների զբաղվածության և նրանց հետագծի վերաբերյալ համընդհանուր տվյալներ:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջը դեռևս չունի հետազոտական աշխատանքների կատարման կարգ, ուղեցույց: Հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածությունը հիմնականում ապահովվում է անհատական աշխատանքների միջոցով, որոնք իրականանում են ռեֆերատների պատրաստման տեսքով:

Քոլեջում ուսանողների իրավունքների ներկայացումն ու պաշտպանությունը ապահովում է հիմնականում Ուսանողական խորհուրդը, որը ինքնակառավարվող մարմին է, որը գործում է իր կանոնադրության համաձայն: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈւԽ-ն քոլեջում իրականացնում է միջոցառումների կազմակերպչական աշխատանքներ: Ուսանողների իրավունքների և պարտականությունների իրազեկման աշխատանքներով զբաղվում են նաև կուրսղեկները իրենց դասաժամերի և ուսանողների հետ հաճախակի հանդիպումների միջոցով: Ուսանողական խորհրդում ներգրավված են քոլեջի 1-4-րդ կուրսերի 2-ական ուսանողներ:

Քոլեջի ուսանողության շրջանում իրականացվել է հարցումներ, ռեսուրսների բավարարվածության վերաբերյալ, սակայն բացակայում են հարցումների արդյունքների որակական վերլուծությունները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ԱՏՊՔ-ում՝ ուսանողների հավաքագրման և ընդունելության հստակ ընթացակարգերի առկայությունը, որոնք նպաստել են վերջին տարիների ընթացքում դիմորդների քանակի աճին, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ կարևոր է այդ մեխանիզմների արդյունավետության գնահատումը, ինչը կարող է նպաստել քոլեջի մասին տեղեկատվության տարածման մեխանիզմների բարելավման: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի կողմից անհրաժեշտության կա գնահատելու գործող մեխանիզմների արդյունավետությունը, որը թույլ կտա ՄՈՒՀ-ին առավել լավարկելու կիրառվող մեխանիզմները՝ ապահովելով շարունակական բարելավում:

Փորձագիտական խմբի դիտարկմամբ՝ քոլեջում ուսանողների կրթական կարիքների վերհանման համար հստակ քաղաքականության և գործընթացների առկայությունը կարող է նպաստել ուսանողակենտրոն միջավայրի ստեղծմանը, որը կնպաստի ուսանողների կարիքների վերհանմանը տարբեր ոլորտներում, որն էլ իր հերթին կհանգեցնի բարելավումների և ուսումնառության լավացմանը: Այս ամենը կհանգեցնի ուսանողների և ՈւԽ-ի սերտ համագործակցությանը և ՈւԽ-ի դերի բարձրացմանը՝ որպես ուսանողների իրավունքները բարձրաձայնող և պաշտպանող կառույցի:

Փորձագիտական խումբը դրական է համարում ուսանողների հնարավորությունները վարչական աշխատակազմին դիմելու ուղղությամբ, սակայն սահմանված մեխանիզմի

առկայությունը քոլեջում կստեղծեր հստակ և ավելի պարզ ընթացակարգ տվյալ գործընթացի համար:

Անհանգստացնող է, որ ուսանողների զգալի մասը տեղյակ չէ քոլեջում գործող Կարիերայի կենտրոնների գործունեությունից: Փորձագիտական խումբը գտնում է, որ Կարիերայի կենտրոնի աշխատակիցները կարող են ամրապնդել համագործակցությունները գործատուների հետ՝ ընդլայնելով շրջանակը, որը հիմք կարող է հանդիսանալ գործատուների բազայի ձևավորման համար: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ կլինի ստեղծել շրջանավարտների համար հարթակ, որը կապահովի շրջանավարտների և գործատուների միջև կապի ձևավորումը և կօգնի արագ արձագանքել աշխատանքային առաջարկներին: Փորձագիտական խումբը կարևորում է նաև Կարիերայի կենտրոնների համակարգված, միասնական և համագործակցային աշխատանքների իրականացումը: Այս ամենը կարող է նպաստել շրջանավարտների՝ ըստ մասնագիտության զբաղվածության ցուցանիշի աճին:

Դրական է այն, որ քոլեջում անցկացվում են հարցումներ, սակայն փորձագիտական խմբի դիտարկմամբ, արդյունքների վերլուծությունների առկայությունը կհանգեցնի քոլեջում խնդիրների բարձրացմանը և բարելավման ուղղված գործողությունների: Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն փաստը, որ քոլեջում չկան ընդհանուր վերլուծական, հետազոտական հմտություններ ձևավորող քաղաքականություն: Այս քաղաքականությունը կնպաստի բոլոր ՄԿԾ-ներում վերլուծական կարողություններ ձևավորող առաջադրանքների մշակմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջում ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմների ներդրումն ու տարածումը կբերեն առավել ուսանողնակենտրոն միջավայրի ապահովմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՏՊՔ-ում ներդրված են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության հստակ մեխանիզմներ, վերջին տարիներին առկա է դիմորդների թիվ կայուն աճ, ուսանողները ազատ են վարչական անձնակազմին դիմելու հարցում, ուսանողները ստանում են համապատասխան խորհրդատվություններ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՏՊՔ-ն **բավարարում է** 4-րդ չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր: Ըստ ՄՈՒՀ-ի 2024-2029 թթ.-ի ՌԾ-ի՝ Քոլեջի նպատակն է ապահովել դասախոսների և վարչատնտեսական աշխատակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Քոլեջի Ռազմավարական հիմնախնդիրն է՝ համալրել և բարելավել դասախոսական համակազմը: Այս հիմնախնդրի լուծման համար սահմանվել են հետևյալ քայլերը.

1. Շարունակել բարձրորակ մասնագետ դասախոսների ներգրավումը՝ նրանց տրամադրելով շարունակական կատարելագործման հնարավորություններ, ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայր:
2. Իրականացնել մարդկային ռեսուրսների նպատակային հավաքագրում, ընտրություն, ուղղորդում, գնահատել կատարողական արդյունքները և կիրառել պարգևատրման համակարգեր:
3. Բարձրացնել Քոլեջի աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակը:

Ըստ Ինքնավերլուծության՝ Քոլեջն իր առջև նպատակ ունի առկա մասնագիտությունների կրթական ծրագրերն առավել արդյունավետ դարձնելու նպատակով համապատասխան ոլորտների առաջատար, փորձառու, գործատու-դասախոսների թիվն ավելացնել ընդհանուր դասախոսական կազմում:

ԱՏՊՔ-ն դասախոսական կազմի ընտրության ժամանակ առաջնորդվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված մրցույթի իրականացման կարգով, ըստ որի, քոլեջում դասախոսի թափուր տեղ առաջանալու դեպքում հայտարարություն է տրվում (թերթում, հաստատության ֆեյսբուքյան էջում)՝ նշելով աշխատանքի նկարագրությունը, պահանջվող որակավորումը և այլն: Ուսումնաօժանդակ կազմն աշխատանքի է ընդունվում առանց մրցույթի՝ ըստ առկա պահանջի, ընտրությունը իրականացվում է տնօրենի կողմից:

Քոլեջի դասախոսական կազմի աշխատանքի ընդունման և աշխատանքից ազատման կարգը սահմանված է ներքին կարգապահական կանոններում (ՀՀ Աշխատանքային օրենսդրության, աշխատանքային պայմանագրերին համապատասխան, Ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատանքի ընդունման և ազատման ընթացակարգեր), դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքային գործառույթները, իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը սահմանված են պաշտոնի անձնագրերում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թափուր հաստիքների համալրման համար հայտարարվել և իրականացվում են մրցույթներ, որոնց արդյունքում աշխատանքի է ընդունվել 17 թեկնածու (2022թ-ի նոյեմբերից սկսած): Մրցույթի ընթացքում անցկացվել է բանավոր հարցազրույց թեկնածուի հետ, հաշվի են առնվել որակավորումը, մասնագիտական

և մանկավարժական գիտելիքները, որից հետո մրցութային հանձնաժողովի քվեարկությամբ հաղթող ճանաչված թեկնածուի հետ կնքվել է աշխատանքային պայմանագիր:

Ըստ կրթական ծրագրերի դասախոսի առջև դրված են հստակ պահանջներ: Քոլեջում դասավանդում են 117 դասախոս (հիմք է ընդունվել 2024-2025թթ.տարիֆիկացիան), որոնցից 105-ն ունեն բարձրագույն կրթություն,12-ը՝ միջին մասնագիտական: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներկայումս քոլեջի կազմում աշխատում են 11 գործատու, 5 շրջանավարտ-դասախոսներ: Դասախոսներից 21-ը համատեղող են, որոնցից 14-ը՝ նաև գործատու: Ուսումնաօժանդակ կազմը համալրում է 52 աշխատակից, իսկ վարչական անձնակազմը՝ 8: Դասախոսական կազմի ընտրության ու համալրման գործընթացի ուսումնասիրությունը ցույց տվեց,որ դասախոսների մասնագիտական որակավորումները հիմնականում համապատասխանում են դասավանդվող առարկաներին և մոդուլներին: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դասախոսական կազմը նվազագույնը՝ 1, առավելագույնը՝ 11 մոդուլ/առարկա է դասավանդում, քանի որ առկա է նեղ մասնագիտական մոդուլներ դասավանդողների պակաս /օրինակ՝ ակնաբուժություն, քիթ-կոկորդ-ականջ, նյարդաբանություն մոդուլներ, Կաթիլային ոռոգման համակարգերի մոնտաժում և շահագործում մասնագիտության մի շարք մոդուլներ և այլն/:[4]

Ըստ Ինքնավերլուծության՝ քոլեջի տնօրինությունն առաջիկայում նախատեսում է ստեղծել իր դասախոսական կազմի մասնագիտական որակներն ու աշխատանքների գնահատման մեխանիզմ, քոլեջը նախատեսում է այդ գնահատման արդյունքում վեր հանված խնդիրների հիման վրա վերապատրաստման դասընթացներ կազմակերպել, սակայն դեռևս քայլեր չեն կատարվել այս ուղղությամբ: 2023 թվականին Քոլեջում մշակվել և ներդրվել է «Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և ընթացակարգ»: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսական կազմի գնահատում քոլեջում իրականացվում է դեռևս դասալսումների միջոցով:

Դասախոսական կազմի գնահատման համար քոլեջում ներդրված մեխանիզմներից են դասալսումները, փոխադարձ դասալսումները, որոնք կանոնակարգված չեն, քանի որ շատ են ծանրաբեռնված: Դասալսումներն իրականացվում են տնօրենի, տնօրենի տեղակալների, առարկայական հանձնաժողովների նախագահների, մեթոդիստի, դասախոսների կողմից: Քոլեջն ունի դասալսումների ընթացակարգ՝ «Դասալսումների անցկացման ընթացակարգ», դասալսումների և փոխադարձ դասալսումների ժամանակացույց և դասալսումների անցկացման ձևաթերթեր՝ «Դասալսման արձանագրություն»: Փորձագիտական այցից պարզ դարձավ,որ քոլեջում իրականացվում են փոխադարձ դասալսումներ՝ ներքին լավ փորձը տարածելու նպատակով: Դասալսումների արդյունքները քննարկվում են դասախոսների հետ, ինչպես նաև առարկայական հանձնաժողովների նիստերի ժամանակ: Սկսնակ դասախոսների մոտ ուսումնական գործընթացը արդյունավետ դարձնելու համար կազմակերպվում են խորհրդատվություններ, ցուցաբերվում՝ մենթորական օգնություն, հրավիրում են դասալսումների փորձառու դասախոսների մոտ: Փորձագիտական այցից

[4] Նախադասությունը վերաձևակերպվել է քոլեջի կողմից տրված դիտարկումների հիման վրա:

պարզ դարձավ, որ ներքոլեջային փորձի փոխանակման միջոցառումները դեռևս հստակ պլանավորված և կանոնակարգված չեն:

Դասախոսական կազմի գնահատմանը նպաստում են նաև ուսանողների շրջանում հարցումների անցկացումը: 2023թ-ից քոլեջում ներդրվել է՝ «Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգ», որն իրականացվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հարցումները դեռևս վերլուծված չեն և որևէ խնդիր վերհանված չէ:

Չնայած այն փաստին, որ քոլեջը կարևորում է դասավանդողների մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների շարունակական բարելավումը՝ մասնագիտական վերապատրաստումներ քոլեջում չեն իրականացվել, եզակի են դեպքերը, երբ դասախոսներն իրենք են նախաձեռնել դրանք: Քոլեջի նախահաշվի և բյուջեի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջը ֆինանսական միջոցներ չի հատկացրել դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների համար: Քոլեջի դասախոսները պարբերաբար մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացված մեթոդական վերապատրաստումներին: Վերջին հինգ տարիներին մասնագիտական վերապատրաստումների մասնակցել է 3 դասախոս:

Անդրադառնալով դասախոսական կազմի կայունությանը՝ հարկ է նշել, որ դասախոսական կազմը երիտասարդացման միտում ունի: Ներկայումս քոլեջում միջին տարիքի դասավանդողները կազմում են դասավանդողների 65,8%, երիտաարդ դասախոսները՝ 21,4% :

Քոլեջում մշակվել է «Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և ընթացակարգ», որը սակայն չի համապատասխանում քոլեջի անհրաժեշտություններին և հնարավորություններին: :

Փորձագիտական այցից պարզ դարձավ,որ քոլեջը փորձում է ապահովել դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացը, առկա են դեպքեր, երբ դասախոսը դասավանդման հետ զուգահեռ շարունակում է կրթությունը օրդինատուրայում (նեղ մասնագիտացում):

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԱՏՊՔ-ն դասախոսական կազմի համալրման համար առաջնորդվում է լիազոր մարմնի կողմից հաստատված մրցութային կարգով, ինչը հնարավորություն է ստեղծում աշխատանքի ընդունել ավելի պատրաստված մասնագետների:

Դրական է, որ միջամբիոնային քննարկումների արդյունքում կատարվում են փորձի փոխանակումներ: Միաժամանակ մասնագիտական պլանավորված վերապատրաստումները կնպաստեն դասախոսների մոտիվացիայի բարձրացմանը և ոլորտի զարգացումները կրթական գործընթացում ներառելուն: Ինչպես նաև ոլորտի այլ փորձերի ուսումնասիրությունը կնպաստի դասախոսական կազմի մասնագիտական զարգացմանը:

Փորձագիտական խումբը գնահատում է քոլեջում դասալսումների առկայությունը որպես դասախոսի գնահատման մեխանիզմ և գտնում է, որ դասալսումները կարող են

ծառայել որպես արդյունավետ գնահատման միջոց, եթե նրանք ստանան համարժեք արձագանք, վերլուծություն և հետադարձ կապի ապահովման գործընթացների լիարժեք իրականացում՝ հաջորդաբար իրականացնելով համապատասխան հստակ գործողությունների շղթա: Փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է վերանայել հարցումների հաճախականությունը և բովանդակությունը, ինչը կնպաստի խնդիրների վերհանմանը և դրանց թիրախային լուծմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը դասավանդման գործընթացում փորձում է ներգրավել նաև գործատուների, պրակտիկ ոլորտի ներկայացուցիչների և սկսնակ դասավանդողների, որոնք կնպաստեն ուսանողների մոտ գործնական հմտությունների ձևավորմանը, դրանով փորձի փոխանակման հարթակ ստեղծում այլ դասախոսների համար ոլորտի նորություններին ծանոթանալու տեսանկյունից: Միևնույն ժամանակ մտահոգիչ է, որ մասնագիտական մոդուլներ դասավանդող դասախոսների մեծ մասն ունի առավելագույն ծանրաբեռնվածություն, քոլեջը չունի կադրային ռեզերվ, տարբեր ոլորտներում առկա են նեղ մասնագիտական ուղղություններով մասնագետների խնդիր, արդյունքում կարող է վտանգվել կրթական գործընթացի անընդհատությունը:

Թեև քոլեջը կարևորում է դասախոսների մասնագիտական որակների բարձրացման գործում մասնագիտական վերապատրաստումների անհրաժեշտությունը, սակայն անհանգստացնող է, որ չի իրականացվել դասախոսների կարիքների վերհանում և գնահատում, ինչպես նաև ըստ կարիքների դասախոսների համար քոլեջը չի իրականացրել մասնագիտական վերապատրաստումներ: Փորձագիտական խումբը ընդգծում է, որ քոլեջն իր վերջին երկու տարվա եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվով որոշակի գումար չի հատկացրել մասնագիտական վերապատրաստումներին, մասնագիտական վերապատրաստումներ չեն եղել:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ դասախոսական կազմի առաջընթացի մեխանիզմների մշակումը իրականացվի ոլորտի հնարավորությունների ուսումնասիրման հիման վրա, ինչը թույլ կտա կիրառելի փաստաթղթեր ապահովել, սա կստեղծի այդ մեխանիզմների ներդրման երաշխիքներ և կապահովի գործընթացների բարելավում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՏՊՔ-ն իր մասնագիտական կրթական ծրագրերն իրականացնելու համար ունի համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմ, արդյունավետ գործող դասախոսների ընտրության մրցութային կարգ, վերջին տարիներին ներգրավվել են պրակտիկ դաշտից դասախոսներ, անձնակազմը համալրված է երիտասարդ և մասնագիտական կորողություններ ունեցող կադրերով, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՏՊՔ-ը բավարարում է չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է բավարար:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր: ԱՏՊՔ-ի 2024-2029 թթ. ՌԾ-ում սահմանված չեն քոլեջի հետազոտության ոլորտում հիմնախնդիրները և դրանց համապատասխան գործողությունները: Առկա չէ հետազոտության զարգացմանն ուղղված հստակ քաղաքականություն, դրանից բխող կարճաժամկետ և միջնաժամկետ պլանավորումներ: Չկան նաև հետազոտական աշխատանքների իրականացումը խրախուսող մեխանիզմներ:

Ինքնավերլուծության ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հետազոտության ոլորտում քոլեջի ռազմավարության հիմնական ուղղվածությունը գիտելիքի հաղորդումն է, կարողությունների, հմտությունների ձևավորումն ու ամրապնդումն է և մասնագետների պատրաստումը: Միևնույն ժամանակ, զարգացման և հետազոտությունների արդյունավետությունը բարձրացնելու համար քոլեջը անհրաժեշտ է համարում հետազոտությունների ծավալի աճի ապահովումը, հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնումը, հետազոտությունների ոլորտում հստակ մոտեցումը անհատի ինքնության ձևավորման և արժևորման համար: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս առումով քոլեջը դեռևս աշխատանքներ չի ձեռնարկել:

Ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ հետազոտական աշխատանքը չի հանդիսանում մասնագիտական մոդուլների բաղկացուցիչ մաս, սահմանված չեն նման աշխատանքներ անցկացնելու մեթոդական ցուցումներ, անհատական աշխատանքների ներկայացման-հանձնման կարգ: Անհատական աշխատանքների հաստատված ցանկ ևս առկա չէ: Պրակտիկաների ընթացքում ուսանողները հետազոտություններ չեն իրականացնում:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին՝ ԱՏՊՔ-ում դիպլոմային և կուրսային աշխատանքներ չեն իրականացվում: Ներկայումս Քոլեջում հանձնարարվում են միայն ռեֆերատեր, տարբեր մոդուլների շրջանակներում, որոնց թեմաները առաջարկվում են դասախոսների կողմից:

Ռեֆերատների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանցում առկա տեղեկատվությունը մեծամասամբ կրկնություն են դասախոսություններից, գրքերից կամ համացանցից: Հետազոտության որոշակի տարրեր պարունակվում են «Ձեռներեցություն» մոդուլի շրջանակում հանձնարարվող ռեֆերատներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ռեֆերատներին ներկայացվող հստակ պահանջներ ևս մշակված չեն Քոլեջում:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ Քոլեջի 1 դասախոս մշակել է «Սառնարանային տեխնիկայի և օդի լավորակման համակարգեր» ուսումնական ձեռնարկը, ևս 1 դասախոս հանդիսանում է մի շարք հոդվածների հեղինակ՝ «Ինֆորմացիոն հոգեբանական անվտանգությունը և ինքնագնահատականների առանձնահատկությունները», «Տեղեկատվական, հոգեբանական ներազդումը և հանրույթի

հոգեբանական անվտանգությունը», «Տեղեկատվական հոգեբանական ներգործությունները հոգեբանական անվտանգության վրա»:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դիտարկմամբ է, որ Քոլեջը կարիք ունի հստակեցնելու հետազոտության ոլորտում ուղղությունները, հետաքրքրությունները և քաղաքականությունը, ինչը կնպաստի արդյունավետ հետազոտությունների իրականացմանը, վերլուծական և ստեղծագործական կարողությունների զարգացմանը՝ այդպիսով ապահովելով համապատասխանությունը ՈԱՇ- 5-րդ մակարդակի բնութագրիչներով սահմանված պահանջներին: Հարկ է նաև ուշադրություն դարձնել շահակիցների շրջանում բարձրացնել ոլորտի կարևորության մասին գիտակցությունը՝ սահմանելով ինչպես խրախուսման մեխանիզմներ, այնպես էլ հստակ պահանջներ:

Փորձագիտական խմբի դիտարկմամբ՝ քոլեջում ռեֆերատների, գործնական աշխատանքների կատարման հստակ տարանջատված բովանդակային և կառուցվածքային չափանիշների առկայությունը կնպաստի ուսանողների ստեղծագործական և հետազոտական մտածելակերպի զարգացմանը: Նմանատիպ հանձնարարականների շրջանակներում ուսանողները հնարավորություն կունենան իրականացնելու ուսումնասիրություններ, վերլուծություններ, կատարել եզրահանգումներ և եզրակացություններ:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում հետազոտական աշխատանքների իրականացմանն ընդառաջ հետազոտական ուղղությունների հստակեցումը, համապատասխան ռազմավարության մշակումը, հետազոտական աշխատանքների իրականացման ուղեցույցի մշակումը, Քոլեջի ներքին շահակիցների իրազեկումը, ինչը հիմք կհանդիսանա հետազոտական աշխատանքների իրականացումը նպատակային և արդյունավետ կազմակերպելու համար:

Փորձագիտական խումբը գտնում է, որ հետազոտական աշխատանքների իրականացումը Քոլեջում խթանելու նպատակով անհրաժեշտություն կա որոշակի խրախուսման մեխանիզմներ ներդնելու, ինչի շնորհիվ կբարձրանա ներքին շահակիցների մոտիվացիան հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար, ինչն էլ իր հերթին կենթադրի մեծ ներգրավվածություն նմանատիպ աշխատանքներում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Քոլեջը չունի հետազոտական առաջնահերթություններն ու հետաքրքրություններն արտահայտող ռազմավարություն, առկա չեն հետազոտության ոլորտի միջնաժամկետ և կարճաժամկետ պլաններ, հետազոտական աշխատանքներ իրականացնելու հստակ քաղաքականություն, ներկայացվող պահանջներ, հետազոտական աշխատանքների իրականացումը խրախուսող հստակ մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՏՊՔ-ն չի բավարարում 6-րդ չափանիշի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր: Քոլեջի 2024-2029 թթ. ՌԾ-ի խնդիրներից են 1. Առավելագույնս օգտագործել կաբինետ-լաբորատորիաների նյութատեխնիկական բազան, 2. Ավելացնել տեղեկատվական արդի տեխնոլոգիաներով և նյութատեխնիկական բազայով հագեցած լսարանների թիվը, 3. Հնարավորության սահմաններում համալրել գրադարանային ֆոնդը:

Քոլեջը գործունեություն է ծավալում 4 մասնաշենքերում: Դրանցից երկուսը հարակից են և տեղակայված են Երևանյան փողոց հասցեում՝ շուրջ 2000 մ² (42 լսարան, «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» մասնագիտության 1 լաբորատորիա, «Սառնարանային տնտեսություն» մասնագիտության 1 լաբորատորիա, «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» մասնագիտության 1 լաբորատորիա): Մի մասնաշենքը տեղակայված է Ջիվանի փող. հասցեում՝ շուրջ 800 մ² (42 լսարաններից միայն 10-ն են կիրառվում, «Կարի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտության 1 արհեստանոց, «Գեղարվեստական ձևավորման աշխատանքներ և դիզայն» մասնագիտության 1 արհեստանոց, «Խոհարարական գործ» մասնագիտության 1 խոհանոց, «Համակարգիչների շահագործում» մասնագիտության 2 լսարան): Իսկ մի մասնաշենքը տեղակայված է Շահումյան փող. 46 հասցեում՝ շուրջ 800 մ² (29 լսարան, «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտության 1 լաբորատորիա, «Մանկաբարձական գործ» մասնագիտության 1 լաբորատորիա, «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության 1 լաբորատորիա, «Քույրական գործ» 1 լաբորատորիա, «Դեղագործություն» 1 լաբորատորիա), որի համար առկա է եզրակացություն շենքի տեխնիկական վիճակի անբավարարության վերաբերյալ, նաև սեյսմիկ անվտանգության տեսանկյունից: Վերջինս գտնվում է անմխիթար վիճակում:

Մեկ ուսանողին բաժին ընկնող լսարանային մակերեսը կազմում է շուրջ 1,5 մ²: Քոլեջն ունի դահլիճ: Համակարգչային լսարաններում 8 կամ 6 համակարգիչ է, որոնք տեխնիկական վերազինման և ծրագրային համալրման կարիք ունեն, միաժամանակ համակարգիչների թվով պայմանավորված դասաժամին 1 համակարգչի մոտ նստում է 2 և ավելի ուսանող:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջը չունի քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության լաբորատորիաներ:

Քոլեջի 3 մասնաշնքերի 3 գրադարաններում առկա է շուրջ /11600 գիրք, որից 5000-ը՝ մասնագիտական/ միավոր գրականություն, այդ թվում՝ դասագրքեր, գրքեր, մասնագիտական գրականություն: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գրադարանում առկա գրականությունը հիմնականում ռուսերենով է, ընդ որում, քելեջը տեսնում է գրականության արդիականացման անհրաժեշտություն, համալրումներն հիմնականում նվիրատվությունների արդյունքում են լինում: Հարկ է նշել, որ գրադարանում առկա դասագրքերը բավարար չեն ուսանողներին ապահովելու համար: Գրադարանը թվայնացված չէ, քոլեջը նախատեսում է էլեկտրոնային գրադարան ունենալ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործնական պարապմունքների, պրակտիկաների իրականացման համար քոլեջը որոշակիորեն օգտագործում է նաև գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները: Մասնավորաբար, փորձագիտական այցից պարզվեց, որ բժշկական ոլորտի որոշ մասնագիտությունների պարագայում պրակտիկան և որոշ դասընթացներ կազմակերպվում են հարակից բժշկական կենտրոններում, որտեղ ուսանողները կարողանում են նաև որոշ դեպքերում, բացի դիտելուց, մասնակից դառնալ գործողությունների իրականացման: Այս մասնագիտությունների համար քոլեջում առկա են ուսումնական մոդելներ, որոնք սակայն բավականին հին են: Միաժամանակ շատ մասնագիտությունների պարագայում ուսանողների պրակտիկան սահմանափակվում է դիտելով, օրինակ՝ Բուժական կոսմետոլոգիա, Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում, Պահածոների և սննդանյութերի տեխնոլոգիաներ, Սառնարանային տնտեսություն և այլն: Փորձագիտական այցից պարզվեց՝ մի շարք մասնագիտությունների ուղղությամբ, գործնական ժամերին անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերումը կատարվում է ուսանողների կողմից՝ Կարի արտադրության տեխնոլոգիա, Խոհարարական գործ և այլն:

Մասնավորաբար, Խոհարարական գործ մասնագիտության պարագայում՝ ըստ համապատասխան բաղադրատոմսի նախատեսված մթերքները ձեռք են բերում խմբային, համատեղ ուժերով, իսկ գործնական ժամի ընթացքում ամբողջ խմբով մի ուտեստ են պատրաստում: Սառնարանային տնտեսություն ու Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում մասնագիտությունների համար առկա են լաբորատորիաներ, սակայն դրանցում առկա սարքերը գլխավորապես որպես դիդակտիկ պարագաներ են ծառայում: Քոլեջում տարբեր մասնագիտությունների համար որպես դիդակտիկ նյութեր գործածվում են նաև պաստառներ: Փորձագիտական այցից և ուսումնասիրություններից պարզվեց, որ Կաթիլային ոռոգման համակարգի մոնտաժում և շահագործում մասնագիտության պարագայում բացակայում են ըստ ՄԿԾ-ի անհրաժեշտ լաբորատորիաները, ուսանողները որոշակի պրակտիկ կարողություններ կարողանում են ձեռք բերել՝ մասնակից դառնալով քոլեջի այգու աշխատանքներին, պրակտիկան կազմակերպվում է մի կազմակերպությունում, որտեղ ամբողջ խումբը համատեղ որոշ աշխատանքներ իրականացնելու հնարավորություն է ունենում, սակայն հիմնականում ուսանողները իրենց կարողությունները զարգացրել էին սեփական հողամասում:

Քոլեջն ունի մեկական պրոյեկտոր յուրաքանչյուր մասնաշենքում: Նաև պրոյեկտոր է առկա հանդիսությունների դահլիճում, որտեղ անցկացվում են տարբեր միջոցառումներ և երբեմն՝ նաև դասապրոցես է կազմակեպվում: Փորձագիտական այցից պարզվեց, որ եղած պրոյեկտորներն էլ լիարժեք կիրառելիություն չեն գտնում, քանի որ, դրանց սղությամբ պայմանավորված դասախոսները հակված չեն դասը պատրաստել նման միջոցներով: Պրոյեկտորները գործածվում են կամ միջոցառումների կամ երբեմն բաց դասերի ժամանակ:

Փորձագիտական այցից և ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ նաև, որ քոլեջը չի իրականացրել լսարանային ֆոնդի վերանորոգումներ և բարելավումներ: Սակայն, լսարանների խնդրով պայմանավորված, գլխավոր մասնաշենքում իրականցվել է լսարանների բաժանում 2 մասի ժամանակավոր միջնապատերով, որպես խնդրի օպերատիվ

լուծում: Միաժամանակ փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ արդյունքում ստացված լսարանները բավականին փոքր են, ինչի հետևանքով ուսանողները բավականին խիտ են նստում:

Քոլեջի եկամուտների և ծախսերի տվյալների համաձայն՝ 2023 թ. կտրվածքով ընդհանուր ծախսերի 85 %-ը բաժին է ընկնում աշխատավարձի ֆոնդին, 2024 թ.-ին նախատեսում են, որ շուրջ 73 %-ն է հատկացվելու աշխատավարձերին: Ըստ 2024-2029 թթ.-ի ՌԾ-ի ՄՈՒՀ-ի առաքելության հիմնական ուղղությունների բյուջեի բաշխման տվյալների՝ քոլեջը հստակ դրամական հատկացումներ չի տրամադրել:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դրամաշնորհային ծրագրերի մասնակցության, ֆինանսավորման այլ մոդելների կիրառման դեպքեր քոլեջում առկա չեն:

Ըստ 2023 թ.-ի ֆինանսական հաշվետվության՝ քոլեջի բյուջեի եկամուտների շուրջ 78 %-ը կազմում են պետական ֆինանսավորումից մուտքերը, 22 %-ը՝ ուսանողների վարձավճարներից մուտքերը: Ըստ 2024 թ.-ի ֆինանսական նախահաշվի՝ քոլեջի բյուջեի եկամուտների շուրջ 61 %-ը կազմում են պետական ֆինանսավորումից մուտքերը, 39 %-ը՝ ուսանողների վարձավճարներից մուտքերը: Որպես լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր, քոլեջն չի իրականացնում կարճաժամկետ դասընթացներ կրթական ծրագրերի ուղղություններին համապատասխան:

Քոլեջը կրթական ծրագրերի համար պահանջվող նվազագույն ռեսուրսների հաշվարկ չի իրականացրել: Վերջին տարիներին ուսման վարձի փոփոխություն արձանագրվել է 2024 թ.-ի մայիսին:[5]

Քոլեջը լիազոր մարմինների հետ հաղորդակցումն ապահովում է Mulberry համակարգով, հաստատության ներսում՝ էլեկտրոնային փոստերի միջոցով: Ներքին փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է կամ էլեկտրոնային փոստերի կիրառմամբ կամ առձեռն տրամադրմամբ: Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգ քոլեջում ներդրված չէ:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջի Երևանյան փողոցի հասցեում տեղակայված մասնաշենքերն ունեն կենտրոնական ջեռուցման համակարգ, հակահրդեհային համակարգ, կրակմարիչներ, պահակակետ, բոլոր հարկերում առկա են տարհանման պլաններ, բուժկետ: Քոլեջի Շահումյան փողոցի հասցեում տեղակայված մասնաշենքում առկա է կենտրոնական ջեռուցման համակարգ, որը սակայն բավականին հին է և գործում է ոչ լիարժեք, բացի այդ անմխիթար վիճակում են պատուհաններն ու դռները: Առկա են խնդիրներ նաև անվտանգության համակարգերի և տարհանման պլանների հետ կապված:

Պետք է նշել, որ առանձին լսարաններ նաև հատակ չունեն: Այս մասնաշենքում առկա չէ բուժկետ:

Քոլեջի Ջիվանի փողոցի հասցեում տեղակայված մասնաշենքում կենտրոնական ջեռուցման համակարգ առկա չէ, աշխատակիցները փորձում են ջեռուցում ապահովել առանձին տաքացուցիչների միջոցով: Այս ամենը մի կողմից խնդիրներ է ստեղծում է

[5] Նախադասությունը վերաձևակերպվել է քոլեջի կողմից տրված դիտարկումների հիման վրա:

հրդեհավտանգ իրավիճակների, մյուս կողմից ստիպում է ուսումնական գործընթացի վերապլանավորումներ կատարելու: Առկա են խնդիրներ նաև տարհանման պլանների հետ կապված:

Ուսանողներն ու դասախոսներն ընդհանուր առմամբ գոհ են բուժկետի ծառայություններից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը չունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանող, որոնց ինտեգրում է կրթական ծրագրերում: Առկա են թեքահարթակներ: Քոլեջի մասնաշենքերիցմ մեկում առկա է կահավորված ապաստարան, որին բավականին մեծ տարածք է հատկացված:Քոլեջի մասնաշենքերում առկա չէ բուֆետ:

Քոլեջը չունի դասախոսների և ուսանողների շրջանում ռեսուրսներից բավարարվածության հարցումների վերլուծություններ և նշում է, որ դեռևս մշակում են մեխանիզմներ: Միաժամանակ նշում են, որ խնդիրները կարող են բարձրացնել առանձին քննարկումների ժամանակ կամ ներկայացնել առանձին ստորաբաժանումներ:

Ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ դեռևս չեն մշակվել քոլեջի կողմից:

Դատողություններ: Փորձագիտական խումբը նշում է, որ չնայած քոլեջն ունի որոշ ռեսուրսային բազա, սակայն մտահոգիչ է, որ արտահայտված խնդիրներ են առկա կրթական գործընթացի կազմակերպման հետ կապված: Փորձագիտական խումբը, կարևորում է օպերատիվ կառավարման մոտեցումների գործածումը տարբեր խնդիրներ կարգավորելիս, սակայն համարում է, որ առաջնային անհրաժեշտության անվտանգ պայմանների ապահովումը ուսումնական գործընթացի կազմակերպման նպատակով առաջնային խնդիր է քոլեջի համար:

Փորձագիտական խումբը կարևորում է այն նախադեպերի առկայությունը, երբ քոլեջը արդյունավետորեն կիրառում է գործատուների ռեսուրսները՝ ըստ կրթական ծրագրերի նախատեսված կարողությունների ձևավորմանն ուղղված: Սակայն, ընդհանուր առմամբ, գործատուների հետ համագործակցության շրջանակը դեռևս բավարար չէ և եղած համագործակցության պարագայում էլ դեռևս բավարար արդյունավետություն չունի ռեսուրսների կիրառման տեսանկյունից: Դրա հետ մեկտեղ, քոլեջը դեռևս լիարժեքորեն չի կիրառում նույնիսկ քոլեջում առկա ռեսուրսները, ինչպես նաև մի շարք մասնագիտությունների համար անհրաժեշտ ռեսուրսներ ձեռք բերելու և լաբորատորիաներ ունենալու անհրաժեշտություն կա: Այս խնդիրների առկայությունը խոչընդոտում է կրթական ծրագրերով նախատեսված պրակտիկ կարողությունների ձևավորման գործընթացը:

Փորձագիտական խումբը նաև համարում է, որ տարբեր մասնագիտությունների առումով քոլեջը կարող է ստեղծել համապատասխան որոշակի պայմաններ՝ ուղղված կարողությունների ձևավորմանը: Մասնավորաբար, Կաթիլային ոռոգման համակարգի մոնտաժում և շահագործում մասնագիտության պարագայում կարելի է մոդելային փոքրիկ հողակտորներ (կամ այգու տարածքում կամ առանձնացված ծաղկամաններով) առանձնացնել յուրաքանչյուր ուսանողի համար և համապատասխան գործնական

կարողությունների ձևավորումն իրականացնել մոդելային կերպով, այս տեսանկյունից կարևոր է նաև ժամանակակից համակարգչային ծրագրերի գործածումը, որոնք կրկին թույլ են տալիս մոդելային կառուցումներ արդեն վիրտուալ կերպով: Նման տարբեր մոտեցումների գործածումը կարևոր է տարբեր մասնագիտությունների պարագայում, ինչը թույլ կտա նպաստել պրակտիկ կարողությունների ձևավորմանը:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ մի շարք ուղղություններով գործնական ժամերին պահանջվող նյութերի ձեռքբերումը կատարվում է ուսանողների միջոցներով, արդյունքում նախ սահմանափակում են հնարավորությունները, բացի այդ ստեղծում են խնդիրներ նախատեսված կարողությունների երաշխավորման տեսանկյունից:

Փորձագիտական խումբը, անդրադառնալով քոլեջի եկամուտներին, նշում է, որ ֆինանսական մուտքերը բազմազանեցման անհրաժեշտություն ունեն, որպեսզի հնարավոր լինի հոգալու քոլեջի առջև ծառացած առաջին անհրաժեշտության խնդիրները և հետագա զարգացումը՝ ֆինանսական հատկացումներ կատարելով ըստ ռազմավարական հիմնախնդիրների: Էական է նաև ըստ կրթական ծրագրերի ֆինանսական ծախսերի ուսումնասիրությունը, այս տվյալները կարևոր են արդյունավետ կառավարման համար:

Փորձագիտական խումբը նշում է, որ, չնայած քոլեջի տարբեր մասնաշենքերում առկա են գրադարաններ, սակայն դրանք մասնագիտական գրականությամբ և դասագրքերով համալրման կարիք ունեն: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը գրադարանի թվայնացման անհրաժեշտություն է տեսել և նշում է, որ այս ուղղությամբ արդեն իսկ որոշակի աշխատանքներ ծավալու կարիք կա:

Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջում փաստաթղթաշրջանառության գործընթացը կանոնակարգված է, սակայն փաստաթղթաշրջանառության և կառավարման գործընթացների առավել արդյունավետ իրականացման համար կարևոր է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգի ներդրումը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը մշակի և ներդնի ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ, որոնց միջոցով իրականացված հետազոտությունները թույլ կտան բարձրացնել ոլորտում առկա խնդիրները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՏՊՔ-ն չունի ռեսուրսային անհրաժեշտ բազա, առկա են խնդիրներ անվտանգության տեսանկյունից, եղած ռեսուրսային բազան կիրառվում է ոչ բավարար արդյունավետությամբ, դեռևս ներդրված չեն ռեսուրսների գնահատման մեխանիզմներ, առկա չէ գործատուների հետ բավարար համագործակցության շրջանակ ռեսուրսների արդյունավետ կիրառման տեսանկյունից, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՏՊՔ-ը **չի բավարարում** չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ըստ ԱՏՊՔ-ի 2024-2029թթ. ՌԾ-ի տեսլական է մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացումը և հասարակության առջև հաշվետվողականության բարձրացումը: Քոլեջի գործունեության հիմնական սկզբունքներից է կրթական գործընթացի թափանցիկությունը և հրապարակայնությունը:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջը իր գործունեության ամբողջական հաշվետվողականությունը ՀՀ ԿԳՄՄՆ և Կառավարման Խորհրդի առջև ապահովում է տարեկան հաշվետվությունների միջոցով, իսկ հասարակությանը՝ քոլեջի սոցիալական էջերի միջոցով / ֆեյսբուք, Ինստագրամ/:

Քոլեջում գործում է ներքին հաշվետվողականության համակարգ՝ առարկայական հանձնաժողովների, ստորաբաժանումների ղեկավարների, կարիերայի պատասխանատուի կիսամյակային հաշվետությունները, սակայն, դրանց ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջում առկա չէ հաշվետվությունների իրականացման միասնական և աստիճանակարգված հստակ համակարգ (մի շարք նույնանուն հաստիքների պարագայում առկա են միայն որոշ հաշվետվություններ), քոլեջի տնօրենի հաշվետվությունը առանձին ստորաբաժանումների կողմից ներկայացված հաշվետվությունների միավորման արդյունք է, հաշվետվությունները գրեթե նույնական են և չեն պարունակում վերլուծական բաղադրիչ: Քոլեջը քայլեր է իրականացնում հաշվետվողականության համակարգը կանոնակարգելու, միասնականացնելու ուղղությամբ:

Ֆեյսբուքյան էջը տրամադրում է տեղեկություն քոլեջի ընթացիկ միջոցառումների, ընդունելության գործընթացի մասին: Քոլեջի վերաբերյալ տեղեկությունը հասարակության շրջանում տարածելու նպատակով պարբերաբար կատարվում են այցեր մարզի դպրոցներ, տրամադրվում են բուկլետներ: Քոլեջը նախկինում ունեցել է կայքէջ, որը սակայն դեռևս վերազինման փուլում է:

Քոլեջը, որպես հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ, կազմակերպում է բաց-դռների օրեր, քոլեջի աշխատակիցների կողմից այցեր են իրականացվում հանրակրթական դպրոցներ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ,որ քոլեջը առաջին քայլերն է ձեռնարկում կայքէջ ունենալու ուղղությամբ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջն ունի ներդրված հաշվետվողականության որոշակի համակարգ, որոնց համակարգված գործընթացները կբերեն քոլեջի հաշետվողականության համակարգի բարելավմանը: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջում հաշվետվությունների միասնական ձևաչափով իրականացումը կարող է դրականորեն անդրադառնալ քոլեջի

կրթական և այլ գործընթացների ամփոփման և գնահատման համար, ինչպես նաև հիմք կհանդիսանան կառավարման համակարգի բարելավման համար:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջում գործում են հասարակության առջև հաշվետվողականության ապահովման մեխանիզմները, որոնք ապահովում են հասարակության շրջանում քոլեջի գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը: Գնահատելի է, որ պարբերաբար այցերը մարզային դպրոցներ, բուկլետների կիրառումը նպաստել են քոլեջի դրական վարկանիշի ձևավորմանը ապահովելով ուսանողների թվի աճ և վստահություն դեպի քոլեջ:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ հետադարձ կապի ապահովմանը նպաստող մեխանիզմների բազմազանեցումը կհանգեցնի քոլեջի գործընթացների բարելավմանը: Փորձագիտական խմբի դիտարկմամբ՝ քոլեջի կայքէջի լիարժեք գործարկումը կնպաստի հասարակության հետադարձ կապի բարելավմանը և տեղեկատվության տրամադրմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ որպես տարածաշրջանային ուսումնական հաստատություն քոլեջը հասարակությանը գիտելիքների փոխանցման ուղղությամբ առավել նկատելի քայլեր իրականացնելու անհրաժեշտություն ունի: Քոլեջը կազմակերպում է որոշ միջոցառումներ, սակայն դրանք գլխավորապես ներքին շահակիցների շրջանակի համար են, ներգրավված չեն հասարակության տարբեր շրջանակներ, քոլեջը նաև հասարակության՝ քոլեջից ակնկալիքների գնահատում չի իրականացրել, մինչդեռ սրանք կարևոր կլինեին դրանց համապատասխան միջոցառումներ կազմակերպելու հարցում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում գործում են ներքին և արտաքին հաշվետվողականության գործընթացներ, հաստատությունը կարևորում է իր գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածումն ու թափանցիկությունը, քայլեր է ձեռնարկում՝ փորձագիտական խումբը գտնում է ,որ ԱՏՊՔ-ը **բավարարում է** չափանիշ 8-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր: ԱՏՊՔ-ի 2024-2029 թթ.ռազմավարական ծրագրում նախանշված չի միջազգայնացմանը վերաբերող հստակ սահմանված ուղղություն, չկա պատասխանատու, մինչդեռ որպես քոլեջի տեսլական նշվում է՝ նպաստել միջազգայնացմանը: Չնայած նրան, որ միջազգայնացումը ներառվել է ռազմավարական ծրագրում, սակայն

ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դեռևս այն քոլեջի համար առաջնային նպատակ չի հանդիսանում և այս ուղղությամբ գործնական քայլեր դեռ չեն իրականացվում, նաև ՌԾ գործողությունների պլանում համապատասխան քայլեր նախատեսված չեն:

Արտաքին կապերի ուղղությամբ աշխատանքներն իրականացնում են տնօրենը, կարիերայի պատասխանատուները և պրակտիկաների ղեկավարները: Ուսումնասիրություններից պարզվեց, որ արտաքին կապերը հիմնականում պայմանավորված են պրակտիկաների գործընթացի կազմակերպմանը: Քոլեջը չունի արտաքին կապերի զարգացման, միջազգային ծրագրերում ներգրավվածության ու միջազգային փորձի ուսումնասիրման մեխանիզմներ:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջը տարբեր կրթական ծրագրերի շրջանակներում համագործակցում է շուրջ 39 տեղական (որոնցից 28-ը միջին մասնագիտական ծրագրի, իսկ 11-ը՝ նախնական մասնագիտական կրթական ծրագրի) գործընկերների հետ: Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջն ակտիվ համագործակցում է ՀՀ շուրջ 10 և ավելի բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ: Փորձագիտական այցից պարզվեց, որ քոլեջը քայլեր է կատարում՝ պահպանելու իրավանախորդ Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջի համագործակցությունը «Անուշավան և Օֆիկ Աբրահամյան կրթական հիմնադրամի» հետ: ՄՈՒՀ-ն ունի գործատու գործընկերներ 23 կրթական ծրագրերի շրջանակներում, որոնց հետ համագործակցության շրջանակներում հաստատությունը կազմակերպում է հանդիպումներ, այցեր, օգտագործում որպես պրակտիկայի վայր միջին մասնագիտական և նախնական մասնագիտական/արհեստագործական/կրթական ծրագրերով սովորող ուսանողների համար: Կան կրթական ծրագրեր, որոնց շրջանակում գործատու-գործընկերներ առկա չեն, իսկ մի շարք մասնագիտությունների պարագայում քոլեջը համագործակցում է միայն մեկ գործընկեր կազմակերպության հետ (օրինակ՝ «Հաշվապահական հաշվառում», «Ֆինանսներ», «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում», «Խմորումների արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն», «Կաթիլային ոռոգման համակարգերի մոնտաժում և շահագործում», «Գյուղացիական/ֆերմերային/տնտեսության կազմակերպում», «Կառավարում արտակարգ իրավիճակներում», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», առկա չի՝ «Սոցիալական ապահովության կազմակերպում» կրթական ծրագրի համար, մինչդեռ «Դեղագործություն» և «Խոհարարական գործ» կրթական ծրագրերի համար՝ 5-6 գործատու): Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրություններից պարզվեց, որ պրակտիկաների շրջանակում գործատուներից պահանջները հստակ չեն ներկայացված, և հիմնականում պրակտիկաները պասիվ բնույթ են կրում՝ ուսանողների պրակտիկ գործունեության թույլ արտահայտմամբ:

ՄՈՒՀ-ի ամենախոշոր գործատու-գործընկերներից են «Արմավիր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ը, «ՄԱՊ» ՓԲԸ Գինու-կոնյակի գործարանը, «ԱՄԻՕ» բանկը, «Ալֆա-ֆարմ» ՓԲԸ դեղատների ցանցը, Արմավիրի համայնքապետարանը և այլն: ՄՈՒՀ-ը «Էրազմուս +» ծրագրերին մասնակցելու ուղղութամբ դեռևս նկատելի քայլեր չի իրականացրել, միայն հյուրընկալել է ծրագրերի անդամներին քոլեջում:

Իսկ ինչ վերաբերում է ներքին շահակիցների օտար լեզուների տիրապետմանը, ապա, ըստ ինքնավերլուծության տվյալների՝ դասավանդողներից 10-ը (8,5%) տիրապետում են օտար լեզուների, իսկ վարչական աշխատակիցները և ուսանողները բավարար գիտելիքներ չունեն: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այս ուղղությամբ նաև քայլեր չեն ձեռնարկվել դեռևս:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը կարևորում է արտաքին կապերի դերը՝ փորձի փոխանակման, մասնագետների որակավորման բարձրացման, ներքին և արտաքին աշխատաշուկաներում մրցունակ մասնագետի պատրաստման գործում: Այնուհանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի՝ արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ ռազմավարության և պլանների բացակայությունը խոչընդոտում է քոլեջի կողմից միջազգայնացման քաղաքականության հստակեցմանը և չի նպաստում միջազգայնացման համար միջավայրի ստեղծմանը:

Փորձագիտական խումբը հատկանշական է համարում հայաստանյան տարբեր կազմակերպությունների հետ հաստատած և ավանդաբար իրենց զարգացումն ունեցող կապերի առկայությունը, որը հանգեցնում է տարածաշրջանում քոլեջի առանձնահատուկ նշանակությանը և կրթական ծրագրերով նախատեսված պրակտիկաների կազմակերպմանը, կարևորում է նաև գործատուների հետ համագործակցության առանձին լավ փորձերի առկայությունը: Սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ կրթական ծրագրերի անհրաժեշտություններով պայմանավորված գործատուների հետ համագործակցության շրջանակի ընդլայնման անհրաժեշտություն կա, միաժամանակ համատեղ կազմակերպվող գործընթացների շրջանակում հստակ փոխպայմանավորվածություններ ձեռք բերելու կարիք կա, մասնավորաբար պրակտիկաների շրջանակում հստակ գործողությունների պլանավորում և իրականացում, համապատասխան կրթական արդյունքների ապահովում:

Այս ամենը կարևոր նախապայման է կրթական ծրագրերով նախատեսված գործնական կարողությունների ապահովման երաշխիքներ ստեղծելու տեսանկյունից:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը միջազգայնացմանն ուղղված գործուն քայլեր ձեռնարկի: Փորձագիտական խումբը կարևորում է համագործակցությունների արդյունքների կիրառումը կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացման, դասախոսական կազմի վերապատրաստումների ակտիվացման, ուսանողների և դասախոսների համար շարժունության հնարավորությունների ստեղծման, համատեղ ծրագրերի իրականացման համար: Վերոնշյալ գործընթացներն իրենց բարերար ազդեցությունը կունենան կրթական ծրագրերի որակի վրա՝ քոլեջի շրջանավարտներին դարձնելով առավել մրցունակ ՀՀ և միջազգային շուկաներում: Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի կողմից դասախոսական կազմի անգլերենի իմացության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրի ներդրումը, ինչը հիմք կստեղծի շահակիցներին միջազգայնացման գործընթացներում ներգրավելուն, ինչպես նաև դասավանդման շրջանակում միջազգային փորձի ուսումնասիրման և ներդրման համար: Նաև կարևոր է, որ քոլեջը գնահատի իր ներուժը արտաքին կապերի և միջազգայնացմանն ուղղված

աշխատանքների արդյունավետ իրականացման համար՝ հստակեցնելով տարբեր օղակների գործառութային շրջանակները այդ ուղղություններով:

Եզրահանգում: Հաշվի առնելով,որ ԱՏՊՔ-ն չունի միջազգայնացման ուղղությամբ ռազմավարություն և հստակ գործողություններ, չունի արտաքին կապերն ու միջազգայնացումը խրախուսող մեխանիզմներ, գործատուների հետ համագործակցությունը սահմանափակվում է պրակտիկաների կազմակերպմամաբ, փորձագիտական խումբը գտնում է,որ ԱՏՊՔ-ը **չի բավարարում** չափանիշ 9-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր: Քոլեջը 2024-2029 թթ.-ի ՌԾ-ում որպես ռազմավարական խնդիր է սահմանել

Որակի ներքին ապահովման համակարգի ներդրումն ու զարգացումը: Սակայն ինքնավերլուծության ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ այս ուղղությամբ աշխատանքներ սկվել են 2018 թվականից: Դեռևս չմիավորված ԱՏՊՔ-ում և Արմավիրի բժշկական քոլեջում ստեղծվել են ՈՆԱՀ-ի ստորաբաժանում, որի նպատակն էր կատարել ուսումնական, հետազոտական և կառավարման գործընթացների գնահատում, ապահովել դրանց որակի վերահսկում, հաշվետվողականություն և թափանցիկություն, նպաստել շարունակական բարելավմանն ու զարգացմանը: 2020 թվականի սեպտեմբերից ԱՏՊՔ-ում գործում է որակի ապահովման գործընթացների իրականացման բաժին:

Վերամիավորումից հետո 2023 թվականին Քոլեջը հաստատել է Որակի ներքին ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը, որոնց նպատակն է կրթության որակի համակարգի ստեղծումը, որակի կառավարումը, ՄԿԾ-ների որակի ապահովումը: Համաձայն փաստաթղթի՝ Քոլեջը խրախուսում է դասախոսական և վարչական կազմի ընդլայնված մասնակցությունը և խթանում անհատական նախաձեռնությունները որակի ապահովման և բարելավման գործընթացներում: Կազմվել է որակի ապահովման կառուցվածքային սխեմա, որտեղ արտացոլված է ներքին շահակիցների ներգրավվածությունը՝ ՈԱՊ, միջին մասնագիտական ծրագրերի պատասխանատու, տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ, 1 դասախոս: Փորձագիտական այցից պարզվեց, որ փաստաթղթով նախատեսվածը դեռևս գործընթացների և արդյունքների չի վերածվել:

Նույն ժամկետում՝ հաստատվել է նաև Որակի ապահովման համակարգի կանոնակարգ, որտեղ որպես խնդիր սահմանված է որակի ապահովման փաստաթղթային հենքի մշակումը, շահակիցների բավարարվածության բացահայտումը, շահակիցների առջև հաշվետվողականության ապահովումը և այլ հաստատությունների ՈԱ բաժինների հետ համագործակցությունը: Փորձագիտական այցից պարզվեց, որ դեռևս աշխատանքներ էին իրականացվել փաստաթղթային հենքի մշակման ուղղությամբ, ինչը շահակիցների ներգրավմամբ և ուսումնասիրությունների հենքով չի իրականացվել:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որակի ապահովման պատասխանատուի համար քոլեջը հատկացրել է 1-ական դրույքաչափով 2 հաստիք: Որակի ապահովման պատասխանատուներից 1-ը Երևանյան 36 հասցեում է ծավալում իր գործունեությունը (նախկին ԱՏՊՔ շենք), մյուսը՝ Շահումյան 46 -ում (նախկին բժշկական քոլեջի շենք): Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ որակի պատասխանատուներից յուրաքանչյուրը զբաղվում է Քոլեջի տվյալ մասնաշենքում իրականացվող գործընթացներով, իսկ նախկին ինդուստրիալ-մանկավարժական քոլեջի տարածքում գտնվող մասնաշենքում կրթության որակի ապահովման գործընթացներ տեսանելի չեն:

Քոլեջը Ինքնավերլուծությանը կից ներկայացրել է որակի պատասխանատուի աշխատանքային նկարագիր և պաշտոնի անձնագիր: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ 2 փաստաթղթերում որակի պատասխանատուի պատասխանատվությունների շրջանակները էապես տարբերվում են միմյանցից: Միմյանցից տարբերվում են նաև 2 որակի պատասխանատուների իրականացրած աշխատանքները, հաճախ այդ գործառույթները վերահսկողական բնույթ ունեն:

Քոլեջը Ինքնավերլուծությանը կից ներկայացրել է մի որակի ապահովման պատասխանատուի տարեկան պլան միայն մեկ տարվա համար, որի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՈԱ աշխատանքները հիմնականում կենտրոնանում են ուսումնական գործընթացի կազմակերպչական աշխատանքների վրա (ՄԿԾ-ների համապատասխանություն ՊԿՉ-ներին, ուսանողների առաջադիմության, բացակայությունների վերահսկում, դասալսումների անցկացում, պրակտիկայի վերահսկում):

Նախատեսված են նաև շահակիցների կարիքների վերհանմանն ուղղված աշխատանքներ՝ գործիքաշարի մշակում, հարցումների անցկացում: Նշված գործընթացների իրականացման պատասխանատուներ են հանդիսանում տարբեր ներքին շահակիցներ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որակի պատասխանատուների կողմից 1 անգամ է միայն իրականացվել հարցում շահակիցների շրջանում: Բժշկական մասնագիտությունների շահակիցների շրջանում արված հարցումների արդյունքները տեսանելի չեն, վերլուծություններ չեն իրականացվել: Նախնական/արհեստագործական մասնագիտությունների շահակիցների շրջանում իրականացված հարցումների մասին տվյալներ առկա չեն: Որոշ մասնագիտությունների գծով առկա են պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների կարծիքներ:

Հարցաթերթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում հարցերը հիմնականում ընդհանրական են, ուղղված են քանակական տվյալների վերհանմանը:

Շրջանավարտների համար նախատեսված հարցերը հարցաշարում խմբավորված են առանձին բաժիններում, ուղղված են հիմնականում կրթական ծրագրի գնահատմանը:

Ուսանողներիի համար նախատեսված հարցաշարերը ներառում են դասախոսների անվանական գնահատում, իսկ ուսումնառության կազմակերպման վերաբերյալ հարցերը քիչ են: Դասավանդողները գնահատում են վարչական տարբեր աշխատակիցների կատարած աշխատանքը՝ կրկին անվանական: Հարցաշարերում ռեսուրսային կարիքները բացահայտող, ռեսուրսների հասանելիությունը վերհանող հարցերը բացակայում են: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կիրառվող հարցաթերթերի արդյունավետությունը չի գնահատվել, վերանայումներ չեն արվել, չնայած որ ինքնավերլուծության մեջ անդրադարձել են դրանց անարդյունավետությանը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջում ՈԱ գործընթացները ամբողջական ՊԻԳԲ շրջափուլ դեռ չեն անցել: Որոշ գործընթացներ նոր են պլանավորվում (օրինակ՝ որոշ մասնագիտությունների գծով արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի մեխանիզմների ստեղծում), որոշներն էլ իրականացման փուլում են (հարցաշարերի կազմում, հարցումների անցկացում): ՈԱՊ-ի կողմից դեռս համընդգրկուն վերլուծություններ չեն իրականացվել, որոնք հիմք հանդիսանային հետագա գործընթացների բարելավման համար:

Անդրադառնալով քոլեջի ներկայացրած ինքնավերլուծությանը՝ որակի արտաքին գնահատման գործընթացների իրականացման համար, կարելի է նշել, որ փաստաթղթում կցված հիմքերը հիմնականում չեն պարունակում վերլուծություններ: Արտացոլված չէ SWOT վերլուծության կապը Ինքնավերլուծության հետ: Ինքնավերլուծությունն իրականացնելու համար կազմվել է աշխատանքային խումբ՝ կազմված 17 անդամից: Ինքնավերլուծության իրականացման աշխատանքները ղեկավարել է Քոլեջի տնօրենը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կազմված ինքնանվերլուծությունը, այսուհանդերձ, չի տարածվել շահակիցների ամբողջական շրջանակում: Շահակիցների կարիքները ինքնավերլուծության մեջ արտացոլված չեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը կարևորում է որակի ապահովման համակարգի ներդրումը քոլեջի կողմից որպես ռազմավարական խնդիր սահմանելու փաստը:

Փորձագիտական խումբը գնահատում է, որ Որակի ներքին ապահովման քաղաքականությանն ու ընթացակարգերի, որակի ներքին ապահովման համակարգի վերանայման կարգի, Որակի ապահովման համակարգի կանոնակարգի մշակումը, ինչը նշանակում է, որ Քոլեջը ստեղծել է որոշակի փաստաթղթային հենք՝ ձգտելով ապահովել որակի ապահովմանն ուղղված աշխատանքների համակարգված կազմակերպում:

Փորձագիտական խումբի վերլուծությամբ Որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի փաստացի իրականացումն ամբողջովին տեղի չի ունենում և դրանք չեն վերածվել գործառնական փաստաթղթերի: Անհրաժեշտություն կա մշակելու տվյալների հավաքագրման լիարժեք մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան վեր հանել բարելավման ենթակա ուղղությունները, սահմանելու բարելավման ցուցիչներ՝ այդպիսով ստեղծելով շարունակական բարելավումն ապահաովող հիմքեր: Ներկայիս մեխանիզմները

ամբողջությամբ չեն բացահայտում շահակիցների կարիքները, ինչը կարող է սահմանափակել համակարգի արդյունավետությունը, խոչընդոտել իրական արդյունքների և բարելավման հասնելու հնարավորությունները: Քոլեջը դեռևս որակի ապահովման արդյունավետ գործող համակարգ ներդնելու անհրաժեշտություն ունի:

Փորձագիտական խումբը դրական է համարում ուսումնական գործընթացների կազմակերպման հարցերում որակի պատասխանատուների պլանավորած աշխատանքներ իրականացնելու փորձերը, ինչը կարևոր է կրթության որակի ապահովման տեսանկյունից:

Սակայն, մեծամասամբ կենտրոնացած լինելով այս ուղղությամբ՝ հնարավոր է առաջանա համակարգի արդյունավետության նվազում, եթե մյուս ոլորտներին (օրինակ՝ արտաքին շահակիցների հետ կապեր, հետազոտություններ, դասավանդողների կատարելագործում) հավասարաչափ ուշադրություն չդարձվի, քանի որ բոլոր ոլորտների որակի մասին տվյալների հավաքագրումը հիմք է հանդիսանում կառավարման մարմինների կողմից տվյալահենք որոշումների կայացման համար: Միաժամանակ ուսումնական գործընթացներում ևս որակի ապահովման պատասխանատուների դերի և գործառույթների հստակեցման անհրաժեշտություն կա:

Փորձագիտական խումբը դրական է համարում 2 որակի պատասխանատու ունենալու փաստը, ինչը հնարավորություն է տվել պահել 2 հաստիքները միավորումից հետո: Այդուհանդերձ մտահոգիչ է, որ ունենալով միևնույն աշխատանքային նկարագիր՝ վերջիններս իրենց աշխատանքը պլանավորում են միմյանցից անկախ, երբեմն իրար հետ չառնչվող գործընթացների իրականացմամբ քոլեջի տարբեր մասնաշենքերում: Որակի պատասխանատուների աշխատանքներում նկատվող տարբերությունները, համագործակցության պակասը կարող են հանգեցնել ոչ հավաստի, երբեմն իրարամերժ տվյալների հավաքագրման, ինչը կարող է բացասաբար ազդել Քոլեջում աշխատանքների կազմակերպման վրա՝ առաջացնելով անհամապատասխանություններ և խաթարել կառավարման մարմինների կողմից արդյունավետ և հիմնավորված որոշումների կայացումը:Մինչդեռ, հստակ աշխատանքային պլանների կազմումը գործառույթների և պատասխանատվությունների հստակ բաշխմամբ կարող է հիմք հանդիսանալ արդյունավետ և համընդհանուր որակի ապահովման համակարգի ներդրման համար: Փորձագիտական խումբի դիտարկմամբ միավորումների ընթացքում միասնական համակարգված մոտեցումը շատ կարևոր է:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջում որոշ մեխանիզմների (հարցումներ, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կարծիքներ) առկայությունը, որոնք թույլ կտան շահակիցների որոշ շրջանակին (որոշ մասնագիտությունների ուսանողներ, գործատուներ, շրջանավարտներ, աշխատակիցներ) ներգավել որակի ապահովման գործընթացներում::
Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ առկա մեխանիզմները դեռևս համակարգված և ինստիտուցիոնալ չեն և բավարար հիմքեր չեն ապահովում լիարժեք ներգրավվածություն բոլոր շահակիցների համար, միաժամանակ ուսումնասիրությունների և վերլուծությունների բացակայությունը խզում է առաջացնում ՊԻԳԲ շրջափուլում և խնդիր

ստեղծում առկա խնդիրների բացահայտման և հետագա բարելավումներ իրականացնելու ուղղությամբ:

Փորձագիտական խումբը նաև նշում է, որ հետազոտությունների շրջանակը պետք է տարածվի քոլեջի բոլոր հիմական գործընթացների ուղղություններով՝ չսահմանափակվելով միայն որոշակի մի ուղղությամբ: Մասնավորաբար, հարցաթերթերում ռեսուրսային բավարարվածությունը և ռեսուրսների հասանելիությունը վերհանող հարցերի բացակայությունը կարող է խոչընդոտել ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ ռեսուրսների արդյունավետ գնահատմանն ու պլանավորմանը: Մինչդեռ նման տվյալների հավաքագրումը կարող է օգնել գնահատել կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների առկայությունն ու մատչելիությունը, ինչը կարևոր է ռեսուրսային արդյունավետ համալրումներ իրականացնելու համար:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում ուսանողների կողմից դասավանդողների գնահատման իրականացումը, ինչը կարող է հիմք հանդիսանալ ուսումնական գործընթացի շարունակական բարելավման համար: Սակայն փորձագիտական խումբը կարծում է, որ ոչ բոլոր մասնագիտությունների դասավանդողների գնահատումը չի կարող կրթության գործընթացի ընդհանրական և լիարժեք պատկեր տալ: Բացի այդ փորձագիտական խումբը անհրաժեշտ է համարում դասավանդողների գնահատման մեխանիզմների բարելավումը՝ գնահատման հստակ չափանիշների սահմանմամբ: Գործող մեխանիզմը չի բացահայտում դասավանդողի հմտությունները, այլ հանդիսանում է անձնավորված գնահատում, ինչի արդյուքում հնարավոր չէ ապահովել գնահատման գործընթացի օբյեկտիվությունը և թափանցիկությունը, վեր հանել դասավանդողների ուժեղ և թույլ կողմերը, կազմակերպել կատարելագործման միջոցառումներ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՏՊՔ-ի Որակի ապահովման ներքին համակարգը դեռևս լիարժեք ներդրված չէ, հստակ սահմանված չէ որակի ապահովման պատասխանատուների դերը, առկա է ներքին և արտաքին շահակիցների ոչ բավարար ներգրավվածություն որակի ապահովման գործընթացներին, բացակայում են տարբեր ոլորտների գործընթացների վերաբերյալ տվյալների վերլուծությունները, չեն իրականացվել որակի ապահովման մեխանիզմների գնահատումներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՏՊՔ-ն **չի բավարարում** չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

ՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Չի բավարարում
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Չի բավարարում
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Արմենուհի Սարգսյան
Փորձագիտական խմբի ղեկավար

26.12.2024

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

1. **Արմենուհի Սարգսյան՝** 2006 թ.-ին ավարտել է Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը՝ «Մաթեմատիկա» մասնագիտությամբ: 2011 թ. -ին շնորհվել է ֆիզմաթ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2007-2011 թթ.-ին եղել է ԳՊՄԻ-ի «Մաթ. անալիզ և դիֆ. հավասարումներ» ամբիոնի դասախոս, 2011-2014 թթ.՝ նույն ամբիոնի ասիստենտ, 2014-2017 թթ.՝ «Բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի» ամբիոնի դոցենտ, 2017 թ.-ից առ այսօր՝ «Մաթեմատիկայի, ֆիզիկայի և SS» ամբիոնի դոցենտ: 2012-2016 թթ.-ին եղել է ԳՊՄԻ-ի Հետբուհական և լրացուցիչ կրթության բաժնի վարիչ: 2017-2018 թթ.-ին եղել է ՇՊՀ-ի Որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն, իսկ 2018-2023 թթ.-ին՝ Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն: Մի շարք գիտական նախագծերում հանդիսացել և հանդիսանում է ավագ գիտական աշխատող, առաջատար գիտական աշխատող կամ ղեկավար: 2017 և 2019 թթ.-ին դասախոսությամբ հանդես է եկել Անգլիայի Քիլի համալսարանում, Erasmus+ շարժունության ծրագրի շրջանակներում: 2018-2023 թթ.-ին ՇՊՀ-ի Գիտական տեղեկագիր հանդեսի խմբագրական խորհրդի նախագահի տեղակալն է, մինչ այդ (հիմնման պահից) հանդիսացել է պատասխանատու քարտուղարը: 2023 թ.-ից FAST-ի ավագ (senior) գիտաշխատող: 1 ուսումնամեթոդական ձեռնարկի և 80-ից ավել գիտական հոդվածների հեղինակ և համահեղինակ է:

2. **Կարինե Մնացականյան՝** 1989թ-ին ավարտել է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը: 1989-1990թթ-ին ավարտել է կլինիկական ինտերնատուրան: 1990-1993թթ. աշխատել է «Արաբկիր»մանկական կլինիկական հիվանդանոցում որպես բժիշկ: 2000թ-ին աշխատել է ԵՀԲՔ-ի հիգիենայի, մանրէաբանության, մաշկավեներական և վարակիչ հիվանդությունների ամբիոնում որպես դասախոս: 2003-2020թթ. աշխատել է ԵՀԲՔ-ի հիգիենայի, մանրէաբանության, մաշկավեներական և վարակիչ հիվանդությունների ամբիոնի վարիչ: 2020թ-ից աշխատել է ԵՀԲՔ-ի մեթոդիստ: Անցել է վերապատրաստումներ, արժանացել է մի շարք շնորհակալագրերի:

3. **Աիդա Դարաղյան՝** 2002թ. ավարտել է Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը՝ ստանալով անգլերեն և ֆրանսերեն լեզուների ուսուցչի որակավորում: 2008-2013թթ . աշխատել է Դարակերտի միջնակարգ դպրոցում՝ որպես օտար լեզվի ուսուցչուհի: 2016-2020թթ աշխատել է Երևանի հ. 31 հիմնական դպրոցում՝ որպես ֆրանսերեն լեզվի ուսուցչուհի և «Օտար լեզուներ» մեթոդական միավորման նախագահ: 2020թ. -ից մինչ օրս աշխատում է «Ֆրանս-հայկական ուսումնական կենտրոն» հիմնադրամում՝ սկզբում որպես ֆրանսերենի դասախոս, իսկ 2021թ. մինչ օրս Կրթության որակի ապահովման

պատասխանատու և Կադրային հարցերով տնօրենի օգնական։ Գործունեության տարիներին մասնակցել է մի շարք միջազգային ծրագրերի։

4. **Իննա Մելքոնյան՝** 2023-ի ավարտել է «ՈՒսմունք» դպրոցը, ընդունվել և սովորում է Հայ-ռուսական համալսարանի Բիո ինժիներիա և բիո ինֆորմատիկա մասնագիտության, երկրորդկուրսում։

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

	01.10 .2024թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	10:00	11:00	60 րոպե
2.	Հանդիպում քոլեջի փոխտնօրենների հետ	11:10	12:10	60 րոպե
3.	Հանդիպում քոլեջի կառավարման խորհրդի անդամների հետ	12:20	13:10	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:20	14:20	60 րոպե
5.	Հանդիպում ինքնավերլուծություն կատարած խմբի հետ	14:30	15:20	50 րոպե
6.	Հանդիպում գործատուների հետ (10-12 հոգի)	15:30	16:20	50 րոպե
7.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների հետ(10-12 հոգի)	16:30	17:10	40 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:20	19:00	100 րոպե

	02. 10.2024թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ուսումնական մասի ղեկավարների, մասնագիտական առարկայական հանձնաժողովների անդամների, մեթոդիստի, մանկավարժ-հոգեբանի հետ	10:00	11:00	60 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)	11:10	12:00	50 րոպե
3.	Հանդիպում ՈՒսանողական խորհրդի անդամների հետ	12:10	12: 50	40 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5.	Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի)	14:10	15:00	50 րոպե
6.	Դասալսումներ	15:10	16:10	60 րոպե
7.	Հանդիպում հաստատության ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ (կարերայի ուղղորդման պատ., պրակտիկայի ղեկավար, գրադարանավար, գլխավոր հաշվապահ, կադրերի բաժնի տեսուչ)	16:20	17: 20	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:30	19:00	90 րոպե

	03. 10.2024թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում «Դեղագործություն» ՄԿԾ պատասխանատուների և դասախոսների հետ	Հանդիպում Կաթիլային «Ոռոգման համակարգերի մոնտաժում և շահագործում» ՄԿԾ պատասխանատուների և դասախոսների հետ	Հանդիպում «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» ՄԿԾ պատասխանատուների և դասախոսների հետ	10:00	11:10	70 րոպե
2.	Հանդիպում «Դեղագործություն» ՄԿԾ ուսանողների հետ (10-12 հոգի)	Հանդիպում Կաթիլային «Ոռոգման համակարգերի մոնտաժում և շահագործում» ՄԿԾ ուսանողների հետ (10-12 հոգի)	Հանդիպում «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» ՄԿԾ ուսանողների հետ (10-12 հոգի)	11:20	12:20	60 րոպե
3.	Հանդիպում ՈԱ պատասխանատուների հետ			12:30	13:20	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկում			13:30	14:30	50 րոպե
5.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ			14:40	15:00	20 րոպե
6.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ			15:10	15: 30	20 րոպե
7.	Փորձագիտական խմբի փակ քննարկում			16:40	18:00	80 րոպե
8.	Հանդիպում ՄՈՒՀ-ի ղեկավար կազմի հետ			18:10	18:30	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

	ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՉԱՓԱՆԻՇ
1.	Տարեկան գործողությունների պլան (3 տարվա կտրվածքով)	1
2.	Բոլոր ստորաբաժանումների աշխատանքային պլաններ և հաշվետվություններ	1
3.	Առաքելության և նպատակների իրականացման արդյունքները գնահա-տելու տարեկան հաշվետվությունները և ներքին գնահատում, տարեկան աշխատանքային պլաններ	1
4.	Բյուջեի նախահաշիվ և հաշվետվություններ 5 տարիների	2
5.	Կառավարման խորհրդի աշխատակարգ, ԿԽ նիստերի արձանագրություններ,Մանկավարժական խորհուրդի աշխատակարգ և նիստերի արձանագրություններ	2
6.	Ուսանողական խորհրդի նիստերի արձանագրություններ ստորաբաժանումների պաշտոնի անձնագրեր	2
7.	Առարկայական հանձնաժողովի նիստերի արձանագրություններ	2
8.	Քոլեջի տարեկան աշխատանքային պլան, Ուսումնական մասի տարեկան աշխատանքային պլան	2
9.	Կարիքների վերհանման նպատակով իրականացված հարցումների արդյունքների վերլուծություն	2
10.	Հարցումների արդյունքների հիման վրա կազմված բարելավման պլանների օրինակներ	2
11.	Լրացված հարցաթերթերի օրինակներ	2
12.	Պետական ամփոփիչ որակավորող հանձնաժողովի արձանագրություններ	2
13.	Մասնագիտության կրթական ծրագրը կազմելիս առարկայական հանձնաժողովների ներկայացրած առաջարկների և արձանագրությունների փաթեթներ	3
14.	Դասալսումների արձանագրություններ: Արձանագրություններ դասալսումների, արձանագրությունների առարկայական հանձնաժողովների նիստերի, վերլուծություններ	3
15.	Ուսանողական հարցումների վերլուծություններ	3
16.	Օրվա դասի պլաններ	3
17.	Ցանկ ըստ կրթական ծրագրերի և պրակտիկաների վայրերի	3
18.	Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվություններ, հարցումների արդյունքների վերլուծություններ, մոնիթորինգի հաշվետվություններ	
19.	Ուսումնական պլաններ և Մոդուլայի ուսումնական ծրագրեր բոլոր դասընթացների համար	3
20.	Բաց և ցուցադրական դասերը, պլանավորված և չպլանավորված դասալսումները, արձանագրություններ, վերլուծություններ	3
21.	Գնահատման թերթիկներ, ռեֆերատներ, քննական տոմսեր, ՊԱԱ հարցատոմսեր	3
22.	Կրթական ծրագրեր կազմող աշխատանքային խմբերի,	3

	մասնագիտական առարկայական հանձնաժողովների կատարած աշխատանքների արձանագրություններ, վերլուծություններ	
23.	Վերջին 5 տարիներին ըստ մասնագիտությունների և կուրսերի ուսանողների քանակը	4
24.	Ուսանողների արտահոսքի հստակ թիվ	4
25.	Դիմորդների ընդունող հանձնաժողովի կազմ	4
26.	Կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցմներ, որը ուղղված է ուսումնական հաստատության ստորաբաժանումների աշխատանքի բարելավմանը	4
27.	ՈւԽ-ի կողմից կառավարման խորհրդին ներկայացված որոշման նախագծեր	
28.	ՈւԽ նիստերի արձանագրությունները	4
29.	«Կարիերայի խորհրդատուի գնահատման» հարցումներ, լրացված հարցաթերթիկի օրինակներ և արձանագրություններ, գործողությունների պլան վերլուծություն	4
30.	Ռեֆերատներ, անհատական աշխատանքներ:	4
31.	Գնահատման թերթիկներ, ռեֆերատներ, քննական տոմսեր, ՊԱԱ հարցատոմսեր	4
32.	Առաջարկությունների արկղի, յուրաքանչյուր ամսվա պարունակության ուսումնասիրություններն ու վերլուծություններ	4
33.	Կուրսղեկների աշխատանքային պլաններ, ժամանակացույցեր	4
34.	Ուսանողների գոհունակության ցուցանիշների հիմքեր, վերլուծություններ	4
35.	Շրջանավարտների բազա, աշխատող շրջանավարտների տոկոսն ըստ տարիների / վերջին 3 տարվա	4
36.	Շրջանավարտների զբաղվածության տվյալներ ըստ մասնագիտությունների	4
37.	Մանկավարժի թափուր տեղի մրցույթի արձանագրություններ,տոմսեր, հայտարարություն	5
38.	Դասախոսների բաշխվածությունը ըստ կրթական ծրագրերի	5
39.	Դասախոսների գնահատման հարցումների արդյունքների վերլուծություն	5
40.	Բաց դասերն իրականացման Ժամանակացույց, թեմաներ, դասավանդողներ	5
41.	Դասավանդողների մասնակցությունը մեթոդական և մասնագիտական վերապատրաստումներին	5
42.	ՊԴԿ կատարած աշխատանքների գնահատումը մանկավարժական խորհրդի կողմից՝ ուսումնական ծրագրերի կատարողականի արձանագրություններ	5
43.	ՈԱԱՀ ստորաբաժանման կողմից իրականացվող՝ Քոլեջի վարչական ծառայություններից ուսանողի բավարարվածության հարցման վերլուծություններ	5
44.	Դասախոսների տարիֆիկացիոն ծանրաբեռնվածությունը	5

45.	Վերջին 5 տարիների ընթացքում պարգևատրված, կամ նյութական խրախուսում ստացած աշխատողների ցանկ, հրամաններ	5
46.	Մենթորի հաշվետվություն	5
47.	Ուսանողների կողմից վարչական կազմի գնահատման հարցաթրթիկներ	5
48.	Դասախոսների կոզղմից լրացված, հարցաթերթիկներ վերլուծություններ	5
49.	Ուսանողների կողմից վարչական կազմի գնահատման հարցաթերթեր, վերլուծություններ	5
50.	Գրադարանային ֆոնդում առկա գրականության բավարարվածության վերլուծություններ	7
51.	Նախկին քոլեջների երեք տարիների ֆինանսների բաշխման քաղաքականություն	7
52.	Ֆինանսական ծախսերի բաշխումը ըստ մասնագիտությունների	
53.	Ուսանողներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների օգտակարության, հասանելիության վերաբերյալ հարցումներ, վերլուծություններ:	7
54.	Գույքացուցակներ ըստ մասնագիտությունների	7
55.	Շրջանավարտների առկա ռեսուրսների ու ծառայությունների օգտակարության, հասանելիության ու արդյունավետության գնահատման բանավոր հարցումներ	7
56.	Վերջին 5 տարիների Ուսխորհուրդի միջոցառումների պլանը	8
57.	ֆինանսատնեսական և ամփոիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվություններ	8
58.	Տարածաշրջանում Քոլեջի հեղինակության վերաբերյալ վերջին երեք տարիների վերլուծություն:	8
59.	արտաքին կապերի և միջազգայնացման կենտրոնի, քաղաքականություն և ընթացակարգեր, աշխատանքային պլաններ:	9
60.	Համագործակցությունը ՀՀ բուհերի և այլ կազմակերպությունների հետ	9
61.	Լրացուցիչ շարունակական կրթության հնարավորությունների մասին տեղեկատվության տրամադրումը, ուսանողների և շրջանավարտների հիմքեր	9
62.	Քոլեջի համագործակցության պայմանագրեր, համաձայնագրեր այլ կազմակերպությունների հետ /3տարի ժամկետով/	9
63.	Քոլեջի որակի ներքին ապահովման գործընթացներն արդյունավետ իրականացնելու նպատակով ՈԱԿ-ի իրականացարած աշխտանքների արձանագրություններ, վերլուծություններ	10
64.	Հարցումների անցկացման ժամանակացույց	10
65.	Քոլեջի որակի արտաքին գնահատման գործընթացների համար ՈՆԱՀ –ի իրականացրած արձանագրություններ, զեկուցումներ, հաշվետվություններ:	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Քոլեջի մասնաշենքեր
2. Լսարաններ
3. Լաբորատորիաններ
4. Վարչական տարածքներ
5. Կից հիվանդանոց
6. Գրադարան
7. Մասնագիտական սենյակներ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՍՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ԱՊՏՔ- Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ
2. ԲԿ-Բժշկական կենտրոն
3. ԿԳՄՍ-Կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարություն
4. ՀՀ-Հայաստանի հանրապետություն
5. ՀԱԱՀ-Հայաստանիա ազգային ագրարային համալսարան
6. ՀԱՊՀ-Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան
7. ՄԿՈՒ -Մասնագիտական կրթություն և ուսուցում
8. ՄՈՒՀ -Մասնագիտական ուսումնական հաստատություն
9. ՄԿԾ - Մասնագիտական կրթական ծրագիր
10. ՄԿՈՒԶԱԿ-Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն
11. ՈԱ-Որակի ապահովում
12. ՈԱԱԿ- Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն
13. ՈԱԾ-Որակավորումների ազգային շրջանակ
14. ՈՆԱՀ-Որակի ներքին ապահովման համակարգ
15. ՈԱՊ-Որակի ապահովման պատասխանատու
16. ՊԿՉ-Պետական կրթական չափորոշիչ
17. ՊԻԳԲ-Պլանավորում- իրականացում –գնահատում- բարելավում
18. ՌԾ-Ռազմավարական ծրագիր
19. ՏՏ-Տեղեկատվական տեխնոլոգիա
20. ՈւԽ-Ուսանողական խորհուրդ
21. ՓԲԸ-Փակ բաժնետիրական ընկերություն